11-17 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2024 ՈՒՐԲԱԹ 034(5815)

Ազգ
Azg

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ISSN: 1829-1651

## Շուշիի սուրբ Ղազանչեցոցը՝ ռուսների՞ն, թե՞ աղվաններին

Գերմանիայում Ադրբեջանի դեսպան Աղաեւը հոկտեմբերի 6-ին X-ի հարթակում մի տեսահոլովակ է տեղադրել՝ կից գրությամբ. «Ադրբեջանի ազատագրված Շուշիի եկեղեցին գեղեցիկ վերականգնված է: Նախնական տեսքը, ինչպիսին կար զավթումից առաջ, վերածնվել է: Մեր հայրենիքի մշակութային եւ կրոնական ժառանգության պահպանումը գերակայող առաջնահերթություն է»: Տեսախաբկանք չէ՝ չոր աչքն էլ, թաց աչքն էլ կվկայի, որ Շուշիի սուրբ Ղազանչեցոց եկեղեցին է՝ խորթ հանդերձով, կապույտ տանիքներով, գմբեթազրկված, առանց երկնառաք խաչի...սպիտակ պատերի վրա երկու տեղ խաչը հուշում է, որ օտարվելու է քրիստոնյա որեւէ համայնքի: Սեպտեմբերի 13-ի «**Ազգ**ում» գրել ենք Բաքվի եպիսկոպոս **Ալեքսիյ Սմիռնովի** ակնարկածը՝ «Անհրաժեշտության դեպքում ջանք կգործադրենք վերականգնելու ավերված կրոնական հուշարձանները ազատագրված տարածքներում»: Ռուսնե՞րն են «վերականգնել», Ղազանչեցոցը ռուսակա՞ն է դառնում, թե՞ աղվանական:

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ՕՐԵՐԻ ՀԵՏ

## Արաբական երկրների ամոթը՝ հոշոտվող Լիբանան

Փոքր եւ անպաշտպան երկրների ցուցակի էտալոնը աշխարհում՝ Լիբանանն է անկասկած. հազիվ 10,500 քկ տարածությամբ, 3,5 միլիոն բնակչությամբ, միջերկրածովյան երկար ցամաքաշերտով, որից անմիջապես վեր են խոյանում անտառապատ սարերը՝ ձեւավորելու համար երկրագնդի ամենահմայիչ մայրիների պուրակը, եւ մի ազգաբնակչությամբ, որը մանրակերտ խճանկարն է ծագումով տարբեր ազգությունների, կրոնների եւ ավանդությունների, որոնք միանում են իրար նավահանգստային մայրաքաղաք Բեյրութում, որը արաբական աշխարհում ծանոթ է **Արուս ալ-բահր** (ծովահարս) անունով: Բոլոր կայսրությունների,- հռոմեական, արաբական, օսմանյան, նույնիսկ ֆրանսիական,- «գայթակղության քարը» հանդիսացած այս երկիրը, որը Հին աշխարհում կոչվել է Փյունիկե, միշտ հպարտ է եղել հին քաղաքակրթությունների օրրան, աշխարհում առաջին այբուբենը հնարողը, նաեւ ծովագնացության ու վաճառաշահության կենտրոն լինելու իր առավելությամբ:

Այդ գայթակղությանը չի դիմացել նաեւ մեր Տիգրան Մեծը, որը կարճ ժամանակով նվաճել է բանանի ու նարնջաստանների այդ երկիրը, մինչեւ Հռոմի բանակներից պարտվելը:

Հպարտ ու դժբախտ երկիր, որի նոր դժբախտությունների պատճառն ու հրահրիչը դարձավ 1948-ին պետություն դարձած Իսրայելը, որի դրոշի վրա, Դավթի աստղանիշի երկու կողմերում, ջրային կապույտ գծեր կան՝ Նեղոսն ու Եփրատը: (Չեմ լսել բնավ, որ Եգիպտոսն ու Սիրիան երբեւիցե Իսրայելից պահանջած լինեն իր դրոշից հեռացնել այդ զույգ գծերը, որոնք խորհրդանշում են իրենց երկրները, ինչպես Ադրբեջանն է պահանջում փոխել մեր Սահմանադրությունն ու Հռչակագիրը...): Այդ թվականից սկսվեց իր տարածքը մեծացնելու, տեղաբնակ ժողովուրդներին, այդ թվում նաեւ Ցեղասպանությունից մազապուրծ՝ Պաղեստին հասած հայությանը, քոչեցնելու եբրայական պետության նվաճողական քաղաքականությունը, ինչպես Թուրքիան՝ 1974-ից Կիպրոսի ու 2011 թ.ից՝ Սիրիայի նկատմամբ:

Կար ժամանակ, երբ Լիբանանի պետական ղեկավարներից ոմանք հայտարարում էին, որ իրենց երկրի ուժը իր... անուժ լինելու մեջ է: (Նկատեցի՞ք առնմանությունը այդ խոսքի եւ մեր երկրում հնչած ու հնչող «Մեր ուժը մեր բառադիության մեջ է» եւ/կամ «Մեր պաշտպանությունը անպաշտպանության մեջ է» խոսքերին): Այդպես են երկրները կորցնում իրենց անկախությունը:

Եվ այդ անուժ ու անպաշտպան երկիրը՝ Լիբանանը, դիմանալով հանդերձ արաբ-իսրայելյան երկու մեծ՝ 1967-ի եւ 1973-ի պատերազմների ցնցումներին, համա-արաբականության՝ իրականության մեջ գոյություն չունեցող կարգախոսի տակ թույլ տվեց նախ պաղեստինյան գաղթական հոծ բազմության տեղավորումը երկրում, ապա թույլատրեց նրանց զինյալ խմբավորումների ներգրավումը հակաիսրայելական պայքարում, որը ի վերջո հանգեցրեց ներլիբանանյան՝ այսպես կոչված 15 տարվա պատերազմին, որը իրականում ոչ թե քաղաքացիական, այլ՝ արաբական որոշ երկրների կռիվն էր Իսրայելի դեմ՝ Արաբական լիգայի հիմնադիր անդամ այդ փոքրիկ պետության հողի վրա: Ո՛չ արաբական խոշորագույն երկիր Եգիպտոսը, ո՛չ Հորդանանը, եւ ոչ անգամ Սիրիան իրենց հողատարածքից չեն կռվում Իսրայելի դեմ: Մանավանդ Սիրիան, որը, իսկապես ծանր ժամանակներ է ապրում տարածաշրջանի մյուս գիշատչի՝ Թուրքիայի պատճառով, 1967-ի պատերազմին կորցրած իր Գոլանի բարձունքների վրա տեղավորված Ցահալի դիրքերը հրթիռակոծել է տալիս Լիբանանի՛ց, «Հըզբոլլահի» հրանոթներից:

Վերջին շրջանում լիբանանյան հողն ու դիրքերը օգտագործողների վրա ավելացել է մեր հարեւան ու բարեկամ Իրանը նաեւ, որի կրկնակ (proxy) ուժը հանդիսացող «Հըզբոլլահը», ճիշտ է, Լիբանանի ամենախոշոր՝ շիա համայնքի զինյալներից է բաղկացած, սակայն նրան ուղղորդողն ու զինողը ո՛չ թե այդ երկրի կառավարությունն է, այլ՝ Թեհրանը, այն էլ մի պատերազմում, որը Լիբանանինը չէ: Լիբանանցի ժողովրդի մեծամասնությունը, գրեթե բոլո համայնքները իրականում դեմ են իսրայելական գերարդիական բանակի դեմ միայնակ կռվելուն, ներառյալ հայկական համայնքը, որը 1975-1990 թթ. ներքին պատերազմին իր թվաքանակն ու ազգային ներուժը կորցնելուց հետո, այժմ պայքարում է իր գոյությունը պահպանելու համար:

Փոքրիկ, անուժ, արաբական հարուստ երկրների եւ գերտերությունների կողմից լքված, արտաքին ուժերի համար կռվադաշտի վերածված երկիր Լիբանանը, պատմական Փյունիկեն, որը շուրջ մեկ շաբաթ էլեկտրոնային հարձակման ենթարկվելուց հետո, այժմ Ցահալի կողմից հոշոտվում է օդից, ծովից ու ցամաքից արձակվող ռումբերով, նաեւ ենթակա՝ Հարավային Լիբանանը կորցնելու վտանգին՝ Նաբաթիյե, Սուր, Սայդա ծովափնյա քաղաքներով հանդերձ:

Առասպելական թռչունը՝ փյունիկը, այս անգամ էլ մոխիրներից կհառնի՞: **Ինշա-ալլահ** (Աստծու ողորմածությամբ), ինչպես ասում են լիբանանցիք:

ՀԱԿՈԲ ԱՎԵՏԻՔՅԱՆ

## Զարմանք բաներ

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ




Զարմանալի է՝ այն, ինչ ես գրում եւ ասում եմ շատ երկար ժամանակ, ի վերջո Շիրակի թեմի առաջնորդ **Միքայել արք. Աջապահյանն** էլ է ասել, մի փոքր այլ կերպ եւ ավելի կոշտ ձեւակերպմամբ, թե երկրորդ եւ երրորդ նախագահները պետք հեռանան ասպարեզից, որպեսզի իշխանափոխություն տեղի ունենա: Ես միշտ պնդել եմ, որ համակարգի փոփոխություն չի եղել, նոր՝ արտահամակարգային ուժեր պետք է գան, որ երկրում բան փոխվի: Ընդ որում՝ մշտապես հայտնված այս տեսակետին մոտիկ ձեւակերպում է արել Աջապահյանը նաեւ մամուլում, նշելով, որ ներկա ընդդիմությունը իշխանությանը ձեռնտու ընդդիմություն է, այն, ինչ ես վաղուց եմ գրում (թերթեք «**Ազգ**»ի թեկուզ վերջին երկու տարվա համարները): Այս տեսակետը սվիններով է ընդունվում ընդդիմության կողմից, հատկապես Միքայել Սրբազանին, քանի որ, ըստ Սրբազանի՝ քաղաքական կուսակցություններ չկան, հավաքվել են՝ ամեն մեկը մի ձեւի տուն է պահում, ընդդիմություն կոչվածն էլ ոչ թե իշխանության հեռացումն է ուզում, այլ իր վերադարձն իշխանության, որը հայրենիքի փրկության հետ առնչություն չունի:

Իսկ թե ով է Կրեմլի գործակալ ընդդիմության կամ իշխանության մեջ (այս որակումը սովորաբար կպցնում են նրան, ով խմբային մտածողությունից տարբերվող տեսակետ է հայտնում)՝ դա բացահայտել կամ հերքել առայժմ չի լինի, քանի որ Ռուսական պետությունը Խորհրդային Միություն անվամբ իշխել է Հայաստանում յոթանասուն տարի, ինչո՞ւ պիտի Հայաստանի ԱԱԾ-ում եւ բոլոր մյուս կառույցներում, ընդդիմության մեջ եւ ամենուր դրածոներ չունենար, եւ հետո էլ վերահսկելի իշխանափոխություններին չմասնակցեր՝ իր շահը հետապնդելով: Հայաստանը լիներ այդպիսի մեծ պետություն, միթե նույնը չէր անի՞:

Քանի որ այսպես սկսեցինք մեր հրապարակումը՝ միանգամից Միքայել Սրբազանի մատնանշած հարցի էությունից խոսենք: Ընդդիմաս կարելի է լսել՝ պահանջում ենք Փաշինյանի հրաժարականը: Սա ասում են շարքային մարդիկ, բայց եւ՝ ողջ ընդդիմությունը, նրա «Սրբազան» թեւով հանդերձ: Հստակեցնենք. վարչապետին ո՞վ է նշանակել, կամ, ավելի ճշգրիտ լինելու համար իրավական առումով՝ ընտրել: Ազգային ժողովը, չէ՞: Ասենք՝ Փաշինյանը հրաժարական տվեց: Ազգային ժողովում ո՞վ է մեծամասնություն՝ նրա գլխավորած կուսակցության 71 հոգանոց խմբակցությունը, չէ՞: Է՝ ջա՛ն: Այդ խմբակցությունը նորից կառաջադրի ու նորից կընտրի Փաշինյանին կամ Փաշինյան 2-ին:

⇨8

## COP29. Մեծ Բրիտանիայի բնապահպան արքան էլ խուսափում է Բաքու մեկնել

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Հոկտեմբերի 9-ին գերմանական «Բունթե» հանդեսն իրազեկեց, որ նոյեմբերին Բաքվում գումարվելիք կլիմայական գագաթնաժողովին չի մասնակցելու Բրիտանիայի արքա 75 ամյա **Չարլզ Երրորդը**, որ հայտնի է բնապահպանական ակտիվ գործունեությամբ եւ նախորդ՝ Դուբայում անցկացված COP28-ին բանախոսների թվում էր: Հղում տալով «Սքայ նյուզին», գերմանական լրատուն գրում է, որ հոկտեմբերի 18-ին Ավստրալիա եւ Սամոա 11 օրյա ուղեւորության պատճառով քաղցկեղով հիվանդ արքան ընդհատելու է նաեւ իր բուժումը, իսկ նոյեմբերի 11-ին Բաքու մեկնելն արդեն չեղարկել է:

«Ֆայնենշըլ թայմզ»-ի հաղորդման համաձայն, Bank of America-ի, աշխարհում խոշորագույն ամերիկյան միջազգային ներդրումային ընկերության՝ BlackRock-ի, Standard Chartered-ի, Deutsche Bank-ի ղեկավարներն այս տարի չեն մեկնելու Բաքու, նրանք չեն մասնակցելու COP 29 կլիմայական գագաթնաժողովին: Թերթն այլ լրատվամիջոցների նման պարզաբանում է, որ Ադրբեջանն այս օրերին քննադատությունների թիրախում է՝ մարդու իրավունքների ոտնահարման, հանածո բնական պաշարների գերօգտագործման պատճառով: Թերթը հիշատակում է, թե գագաթնաժողովը հյուրընկալող երկրի՝ Ադրբեջանի թեկնածությունը հաստատվեց արեւելաեվրոպական երկրների սատարման շնորհիվ:

Գերմանական «Շթեռնը» հոկտեմբերի 8-ին ծանուցում է, որ Ադրբեջանը կլիմայական գագաթնաժողովին ընդառաջ էլ բացառություն չի անում, ձերբակալում է նրանց, որ համարձակվում են այլ կարծիք արտահայտել: Մարդու իրավունքների պաշտպան կազմակերպությունները՝ Human Rights Watch-ը, Freedom Now-ն միացյալ զեկույց են հրապարակել՝ հաղորդելով, որ Ադրբեջանի կառավարությունը ջանում է, որ անկախ խմբավորումներ, քննադատական մեդիա չլինի: « Ըստ տեղեկությունների՝ Կասպից ծովի նավթով ու գազով հարուստ երկրում շինծու եւ քաղաքական դրդապատճառներով տասնյակ մարդիկ են ձերբակալվել: HRW-ն եւ Freedom Now-ն փաստագրել են 33 դեպք, որոնցում Ադրբեջանի իշխանություններին քննադատողները ենթարկվել են քրեական հետապնդման եւ բանտարկության:

⇨2

ԳՐԻԳՈՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ
Իրանագետ

# Ադրբեջանը՝ Իսրայելի հարավկովկասյան կամուրջ

Մերձավոր Արեւելքում ծայր առած նոր լարվածության խորապատկերի վրա, կարծես ստվերի տակ են մնում հարավկովկասյան հիմնախնդիրները: Այս ընթացքում, սեպտեմբերի 27-ին, Ադրբեջանի նախագահի հրամանագրով դեռեւս 2019 թվականին սկզբին ձեւավորված «*Az rsilah*» պետական ձեռնարկությունը փոխըմբռնման հուշագիր է ստորագրել իսրայելական AS Holdings ընկերության եւ նրա հետ փոխկապակցված Ari Arms ձեռնարկության հետ, որը հայտնի է որպես ՆԱՏՕ-ի չափանիշներին համապատասխանող թեթեւ զինատեսակներ արտադրող ձեռնարկություն: Այդ մասին X-ի իր էջում գրառում է կատարել Բաքվում Իսրայելի դեսպան **Ջորջ Դիքը**:

Նույնը հաստատում է նաեւ ադրբեջանական «Hamam-Times» կայքը, որի տարածած տեղեկատվության համաձայն, սեպտեմբերի 28-ին նշված ընկերությունների միջեւ համագործակցությունն ընդլայնելու մասին պայմանավորվածություն է ձեռք բերվել:

«Ալ-Աքսայի փոթորիկ» ռազմական գործողությունից հետո մեկ տարվա ընթացքում, չնայած իսլամական երկրների մեծամասնությունը Գազայի դեպքերի պատճառով վերանայել են իրենց հարաբերությունները Իսրայելի հետ ու դատապարտել Թել Ավիվին՝ ցուցաբերած վայրագությունների համար, մինչդեռ Բաքուն հաստատուն քայլերով շարունակում է զարգացնել իր հարաբերությունները Իսրայելի հետ:

Ստոքհոլմի Խաղաղության միջազգային հետազոտությունների կենտրոնի կողմից իրականացված ուսումնասիրությունների համաձայն, 2011-2020 թվականներին Իսրայելին բաժին է ընկել Ադրբեջանի սպառազինության ընդհանուր ներմուծման 27%-ը: Դեռեւս 2012 թվականին Իսրայելն ու Ադրբեջանի Հանրապետությունն ստորագրել էին համաձայնագիր, համաձայն որի Իսրայելի պետական օդատիեզերական արդյունաբերությունը Բաքվին պետք է տրամադրեր 1,6 միլիարդ դոլարի անօդաչու թռչող սարքեր, ինչպես նաեւ հակաօդային եւ հակահրթիռային պաշտպանության համակարգեր:

Ադրբեջանի պաշտպանության նախարարությունը նաեւ երկրում որոշ զինատեսակներ (օրինակ՝ անօդաչու թռչող սարքեր) արտադրելու շուրջ պայմանավորվածություն է ձեռք բերել Իսրայելի Aviation Defense Systems ընկերության հետ:

Ստոքհոլմյան ինստիտուտի փոխանցմամբ, այս միտումը նախորդ տասնամյա ժամանակահատվածի համեմատությամբ աճ է արձանագրել: Այսպես, 2016-2020 թվականներին Բաքուն իր հիմնական սպառազինությունների 69%-ը ներկրել է Իսրայելից: Նաեւ, ըստ Հնդկաստանում գործող «The *Institute of Peace and Conflict Studies*» կենտրոնի, 2015-2019 թվականներին Իսրայելն ապահովել է Ադրբեջանի Հանրապետության սպառազինությունների գնման տարեկան 60%-ը: Բացի այդ, Ադրբեջանին օգնել է իսրայելական *Elta Systems* ընկերությունը՝ տրամադրելով Արցախի համապարփակ թվայնացված քարտեզը՝ ադրբեջանական ուժերին զգալի առավելություն տալով գործողության ընթացքում: Ուստի, 44-օրյա պատերազմի նախօրեին ու նաեւ Արցախում էթնիկ զտում իրականացնելուն ուղղված ադրբեջանական զինուժի գործողությունից առաջ (2023 թ.), Իսրայելի ղեկավարությունն անհրաժեշտ զենք ու զինամթերք է տրամադրել ադրբեջանցիներին, առանց որի Ադրբեջանը չէր կարող արագ հաջողության հասնել: Անգամ նշվել է, որ իսրայելական հատուկ ծառայությունները կարեւոր դեր են խաղացել գործողության պլանավորման ընթացքում:



*Iranian diplomacy* կայքի համաձայն, Արցախն օկուպացնելուց հետո լուրեր էին տարածվել, որ Իսրայելը գրավյալ տարածքներում ձեռնամուխ է եղել ռազմահենակետերի տեղակայմանը: Ըստ իրանական կայքի տարածած լուրերի, 2023 թվականին կողմերը պայմանագիր են կնքել Իսրայելի կողմից Ադրբեջանին 120 մլն դոլար արժողությամբ երկու արբանյակների գնման, ինչպես նաեւ 1,2 մլրդ դոլար արժողությամբ *Barak MX* հրթիռների ձեռքբերման վերաբերյալ:

Երկկողմ համագործակցությունը նաեւ նախատեսում էր Ադրբեջանի հարավային սահմաններում էլեկտրոնային հետախուզական կայաններ կառուցելու միջոցով վերահսկողության տակ պահել Իրանի տարածքը:

*«Iranian diplomacy»*-ի փոխանցմամբ, Բաքուն նաեւ հնարավորություն է տալիս Իսրայելի հետախուզության եւ հատուկ առաջադրանքների վարչությանը՝ Մոսադին, Ադրբեջանում ստեղծել գերժամանակակից օպերատիվ բազա՝ Իրանի տարածքում հատուկ գործողություններ իրականացնելու համար: Բաքուն միաժամանակ իր օդանավակայաններն է տրամադրում Իսրայելին՝ անհրաժեշտության դեպքում Իրանի միջուկային օբյեկտների վրա հարձակումներ իրականացնելու համար:

Ադրբեջանը նաեւ էներգակիրների մատակարարման առումով Իսրայելի հուսալի գործընկերներից է:

Ըստ առկա տվյալների՝ Իսրայելի հում նավթի ավելի քան 60%-ը մատակարարվում է Բաքվից՝ Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղով: Չնայած Գազայի դեպքերի առնչությամբ միջազգային հանրության ճնշումների, Ադրբեջանը շարունակում է Իսրայելին էներգակիրների մատակարարման հարցում նշանակալի տեղ զբաղեցնել:

⇨1 Ձերբակալվածների թվում է իրավապաշտպան **Անար Մամեդլին**: Մինչ կալանավորումը նա նախաձեռնել եւ համահիմնել է կլիմայի վերաբերյալ արդարության հասարակական մի կառույց, որ Ադրբեջանում քաղաքացիական իրավունքների եւ կլիմայական արդարադատության համար քարոզչություն պիտի իրականացներ ՄԱԿ-ի կլիմայի համաժողովից առաջ: Նրա ձերբակալության պատճառ է նշվում կեղծ փողերի մաքսանենգությունը:

Սակայն հիշյալ հրապարակումները չեն անդրադառնում Արցախի հարցին, որ կարեւորել է «Թեյբլ» վերլուծականի հոդվածագիր **Մաքսիմիլիան Արնհոլդը**՝ հոկտեմբերի 1-ի իր անդրադարձում: Նա Ադրբեջան-Հայաստան հակամարտության մեջ կարեւոր է նկատում կլիմայական, էներգետիկ, բնական պաշարների ազդեցությունը: Վերլուծաբանը հիշատակում է մեկ տարի առաջ Ադրբեջանի՝ Լեռնային Ղարաբաղի վրա հարձակումն ու գրավումը, դրա մեջ ընդգծում ԵՄ անուղղակի ներգրավվածությունը՝ **Ուրսուլա ֆոն դեր Լայենի** կնքած գազային պայմանագրի միջոցով: Հաջորդ տեսանելի կետը Հայաստանի՝ ռուսական գազից եւ նավթից կախյալության թոթափումն է: Հայաստանից հիդրոէներգիա եւ հողմային էներգիա դեպի Եվրոպա արտահանելու նոր հնարավորություն կտա Սեւ ծովով նոր ստորջրյա մալուխի կառուցումը: Հայաստանի մասնակցությունը մալուխային նախագծին թույլ կտա երկրին օգտվել կանաչ էներգիայից,Վրաստանի միջոցով այն արտահանել եվրոպական շուկաներ, հետեւաբար խթանել սերտ համագործակցությունը ԵՄ-ի հետ», քաղտնտեսագետ **Արմեն Սահակյանի** տեսակետն է մեջբերում «Թեյբլի» վերլուծաբանը: Կլիմայական փոփոխությունները նկատելի են Հայաստանում, գրում է հոդվածագիրը՝ հիշատակելով մայիսին Հայաստանի հյուսիսում 4 զոհ, 270 տնավեր գրանցած ջրհեղեղը, որի տուժածներին առաջին անգամ ԵՄ-ն 100 000 եվրո օգնություն տրամադրեց:

# COP29. Մեծ Բրիտանիայի բնապահպան արքան էլ խուսափում է Բաքու մեկնել

Գերմանական «Թեյբլ» մեդիայի վերոհիշյալ վերլուծականի հաջորդ կարեւոր կետը ջուրն է: «Ջրի խնդիրները խորացնում են ճգնաժամը, գրում է հեղինակը: Մինչ 2020-ը Ադրբեջանը Հայաստանին ճնշում էր ԼՂ ջրի պաշարների օգտագործման հայց ներկայացնելով: ԼՂ-ն վերահսկելով, Ադրբեջանի ձեռքում են Հայաստանի ամենամեծ ջրային ավազանը սնուցող աղբյուրներն ու վտակները: Ջրի խնդիրը հանգուցալուծելը ենթադրում է նաեւ համագործակցության հնարավորություն, որն էլ իր հերթին՝ երկրների մասնագետների միջեւ ջրային կառավարման ծրագիր: Կլիմայական գագաթնաժողովը կարող է այդ հարցի քննարկման սկիզբ դառնալ:

Հաջորդը, որ չի վրիպում գերմանացի վերլուծաբանի հայացքից, ԼՂ-ում բնապահպանական առաջատար նախագծերի կենտրոնացումն է: Ադրբեջանը հենց վերանվաճված ԼՂ-ում է էկո մոդելային բնակավայրեր կառուցում՝ այդու «պատերազմի կարմիրը կանաչ ներկելով»: Կովսականում (Զանգիլան) խելացի (smart) գյուղ է կառուցվում, որն աշխատում է վերականգնվող էներգիայով՝ փոքր հիդրոկայանից: 2021-ից ի վեր **Ալիեւը** ԼՂ հայտարարեց կանաչ էներգիայի գոտի եւ ներդրումներն ուղղված են հիմնականում հիդրոէներգետիկայի, քամու, արեգակի էներգիան շահագործելուն:




«Թեյբլի» վերլուծաբանը նկատել է տալիս, որ Ադրբեջանը չի թաքցնում, որ իր ձեռքում է հումքով հարուստ Լեռնային Ղարաբաղը: Այդ տարածքն ապահովում է իր ապագան՝ նավթի եւ գազի ավարտից հետո: Սա ցույց է տալիս «Լեռնային Ղարաբաղում օգտակար հանածոների վերաբերյալ» կառավարության զեկույցը, ըստ որի այնտեղ հայտնաբերվել են կրիտիկական հումքի 350 հանքավայր՝ պղինձ, կոբալտ եւ լիթիում: Այս հանքանյութերի հրատապ կարիք ունի նաեւ Եվրոպան: ԼՂ-ի նվաճումից ընդամենը մեկ ամիս անց Ադրբեջանի շրջակա միջավայրի եւ բնական պաշարների նախարար **Մուխթար Բաբաեւը** հրավիրեց «GeoMining Baku»-ն ՝ Ադրբեջանում հանքարդյունաբերության առաջին տոնավաճառը: «Նոր շրջանները հարուստ են բնական հանքային պաշարներով, որ կարեւոր դեր կխաղան վերակառուցման գործում», նոյեմբերին Բաքվում կլիմայական գագաթնաժողովը նախագահող **Բաբաեւի** խոսքն է հիշատակում «Թեյբլը»:

Խաղաղություն կլինի՞...գագաթնաժողովից առաջ: Վերլուծաբան Մաքսիմիլիան Արնհոլդը նկատել է տալիս, որ հակվածություն կա գագաթնաժողովը գնահատել՝ որպես ժամանակավոր անվտանգություն Հայաստանի համար: Սակայն բարձրաստիճան դիվանագետները մտավախություն ունեն, որ COP29-ից հետո կարող է հերթական հարձակումը լինել: «Հայաստանի վարչապետ **Փաշինյանը** շարունակում է զիջումներ անել Ադրբեջանին՝ Ալիեւին հանգստացնելու հույսով», քաղաքագետ **Տիգրան Գրիգորյանի** քննադատությունից հասված է ներկայացնում գերմանացի վերլուծաբանը: Ալիեւին Հայաստանում պետք է արտաքին թշնամի՝ սեփական իշխանությունը պահպանելու համար. Ադրբեջանը պահանջում է նաեւ Հայաստանում սահմանադրական փոփոխություն: Բայց մինչեւ 2027 թվականը չի սպասվում, որ փոփոխությունները ավարտին կհասցնեն, ինչը կարող է հետաձգել խաղաղության գործընթացը: Առայժմ բանակցություններ են վարվել միայն շրջանակային համաձայնագրի շուրջ: Կլիմայի գագաթնաժողովի բացումից առաջ կամ դրա ընթացքում կարելի էր պատկերացնել խաղաղության համաձայնագրի կնքումը, բայց Ադրբեջանի համար սա «PR հաղթանակ է», վերլուծաբան Գրիգորյանի կարծիքն է ներկայացնում «Թեյբլը»:

ՅԱԿՈԲ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

# Ծաւալապաշտ հրեան

Դպրոցական օրերէն, մեր զինուորական դաստիարակութեան սպայ-ուսուցիչէն լսած էի, որ Հրէաստանի խորհրդարանի դահլիճի ճակատին գրուած է՝ «Եփրատէն մինչեւ Նեղոս, քու հայրենիքդ է Իսրայէլ»: Անշուշտ զինուորական դասատուին նպատակն էր մեզի հասկցնել, որ 1948-ին ստեղծուած հրեաներու «հայրենիքը» միայն Պաղեստինեան հողերով պիտի չսահմանափակուի, մարդիկը աչք ունին հարեւան երկիրներու տարածքներուն վրայ ալ: Անոնց նպատակն է իրագործել վերոյիշեալ լոզունգը, Իսրայէլի տարածքը ընդարձակելով, ամէն անգամ որ առիթ ներկայանայ:

Այդ առիթը ներկայացաւ1967-ի հինգօրեայ պատերազմին, երբ իսրայէլեան բանակը գրաւեց Սուրիոյ Կոլանի բարձունքը եւ Եգիպտոսի Սինայիի անապատը: Սինայիի անապատը շրջան մը ետք եգիպտական բանակը ազատագրեց, սակայն սուրիական գրաւուած հողերը մնացին գրաւուած եւ ապօրինաբար կցուեցան Իսրայէլին: Այդ գրաւուած հողերուն վրայ ապրող սուրիացիներ կան, որոնք մերժեցին տեղահան ըլլալ եւ իսրայէլեան հպատակութիւնը ընդունիլ, Տիւրզի բնակիչները մինչեւ այսօր զանազան առիթներով ցոյցեր կը կազմակերպեն՝ պահանջելով վերադառնալ ու վերամիանալ Սուրիոյ իրենց կիսուած ընտանիքներուն:

Այս հակիրճ պատմականը ըրի, որպէսզի հրէասէրները հասկնան, թէ ի՞նչ է Իսրայէլը իսկութեան մէջ: Վերոյիշեալ լոզունգը անիմաստ տեղը չէ դրուած, ոչ ալ դահլիճը զարդարելու համար է, այլ անիկա վերջնական նպատակն է ընդամէնը 76 տարի առաջ Անգլիոյ օգնութեամբ եւ արեւմտեան աշխարհի մեղսակցութեամբ ստեղծուած երկրի մը, որ անյագօրէն կ՚ուզէ կուլ տալ շուրջի երկիրները  եւ ստեղծել Մեծն Իսրայէլը:

Անցնող տարին եւ վերջերս ալ ամէն օր պարզուող արաբ-իսրայէլեան պատերազմի դրուագներու եւ հեռատեսիլային ցուցադրութիւններու ատեն յստակ կերպով նկատեցի իսրայէլացի զինուորներուն տարազի ձախ թեւին վրայ ամրացուած տարբերանշան մը, ուր կ՚երեւէր հրեաներուն երազած Մեծն Իսրայէլի քարտէսը, որուն մէջ ներառնուած էին տարածքներ Սուրիայէն, Լիբանանէն, Յորդանանէն, Սէուտական Արաբիայէն ու Եգիպտոսէն:

Երբ մենք ամէն առիթով եւ ամէն տեղ Արարատ լեռան նկարը կը դնենք, պարզապէս ըսել կ՚ուզենք՝ Արարատը մերն է, մերը եղած է Նոյի օրերէն ու մերը պիտի դառնայ օր մը, երբ ի վիճակի ըլլանք մեր Արեւմտեան Հայաստանը ազատագրել: Մենք իրաւունք ունինք, պատմական հազար փաստ կայ, որ Արարատը մերը եղած է, ոչ միայն որպէս սուրբգրային փաստ, այլ պատմական ապացոյցներով, որ ոչ մէկը կրնայ անտեսել:

Իսկ հրեաներուն ըրածը՝ տարածքը գրաւելու եւ զայն ընդարձակելու ձգտումները ոչ մէկ լուրջ հիմք ունին, նոյնիսկ եթէ Աւետարանը յիշած է, որ իրենք Աստուծոյ ընտրեալ ժողովուրդն են, կամ նոյնիսկ եթէ Մեռեալ ծովու յատակէն ձեռագիր փաթեթներ կը յայտնաբերուին: Պաղեստինի մասին՝ գուցէ, թէեւ նոյնիսկ ա՛յդ կարելի է վիճարկել, սակայն կողքի երկիրներու տարածքներն ալ իրենց պատկանած ըլլալը փաստել փորձելը, պարզապէս երեւակայածին երազ մըն է: Աւետարանն ալ, այդ փաթեթներն ալ իրենց շինած պատմութիւններու փաստաթուղթեր են, որոնց վրայ յենած իբր թէ 2000 տարի ետք անոնք վերատիրացան իրենց հայրենի հողերուն:

Ըսելիք չունիմ, խելացի ժողովուրդ են, ստեղծագործ, աշխատասէր, սակայն բնական ու շինծու փաստերը իրարմէ դժուար չէ զատորոշել, նստիլ ու պատմութիւն յօրինել, որո՞նց խաբելու համար: Շատ շատեր նետուած կուտը կերած են ու կ՚ակնկալուի որ հաւկիթ ածեն: Այդ կուտերը հաւկիթի փոխարէն փչոցներ կ՚ածեն անդադար:

Ահա՛, կը տեսնէք, մէկ տարիէ ի վեր ինչ դաժանութեամբ Պաղեստին եւ Լիբանան կը ներխուժեն, այս ալ ծրագրուած առիթ է, որ դարձեալ հողապատառներ գողնան վրիժառութեան պատրուակով: Ծաւալապաշտ, ռազմասէր Իսրայէլը փորձանք դարձած է տարածաշրջանի մարդոց եւ պետութիւններու գլխուն:

# Մ. Նահանգներու եւ Գանատայի Թ.Մ.Մ.-եան 37-րդ Պատգամաւորական Ժողովը եւ «Ապագայ» շաբաթաթերթի 49-րդ տարեդարձը



Բացառիկ ոգեւորութեան եւ խանդավառութեան  մթնոլորտի մը մէջ է որ Հիւսիսային Ամերիկայի չորս ծագերէն եկած աւելի քան քառասուն պատգամաւորներու մասնակցութեամբ՝ Հոկտեմբեր 4-5 շաբաթավերջին, Մոնթրէալի Թ.Մ. Մ.-եան կեդրոնին մէջ տեղի ունեցաւ Միացեալ Նահանգներու եւ Գանատայի Թ.Մ.Մ.-ի 37-րդ պատգամաւորական ժողովը եւ նաեւ նշուեցաւ «ԱՊԱԳԱՅ»՝ Գանատահայ առաջին շաբաթաթերթին 49-րդ տարեդարձը:

Ֆիզիքական ներկայութեամբ պատգամաւորական ժողովներու շարքին վերջինը տեղի ունեցած էր 2019-ին Պոսթընի մէջ: Անկէ ետք Covid-ի եւ յաջորդող տարիներուն, միայն  Zoom-ով կատարուած էին հաւաքները:

Այսպէս ուրեմն, Ուրբաթ՝ 4 Հոկտեմբեր 2024-էն սկսեալ Ամերիկայի չորս ծագերէն Մոնթրէալ ժամանեցին տարբեր մասնաճիւղերէն՝ Լոս Անճելըսէն, Տիթրոյթէն, Ուաշինկթընէն, Ֆիլատելֆիայէն, Նիւ Ճըրզիէն, Նիւ Եորքէն եւ Պոսթընէն բազմաթիւ պատգամաւորներ եւ հիւրեր, որոնք Ուրբաթ երեկոյեան հիւրասիրուեցան Մոնթրէալի Թէքէեանի գեղատեսիլ կեդրոնին մէջ, Մոնթրէալի վարչութեան եւ անդամներուն կողմէ, ջերմ մթնոլորտի մը  մէջ: Քանի մը տարիներէ ի վեր իրարու հանդիպելու պատեհութիւնը չունեցած բազմաթիւ անդամներ, առիթը ունեցան իրենց լուրերը փոխանակելու եւ կարօտը առնելու:

Շաբաթ առաւօտուն ժամը 9:30-ին, սկսաւ պատգամաւորական ժողովը կեդրոնին երկրորդ յարկի ժողովասրահին մէջ եւ տեւեց մինչեւ կէսօրէ ետք ժամը 4:00-ը: Ժողովին կ՚ատենապետէր Միութեան Կեդրոնական Վարչութեան ատենապետ՝ Դոկտ. Արշաւիր Կէօնճեան շրջապատուած Կեդրոնական Վարչութեան անդամներով: Քառասունէ աւելի պատգամաւորներու մասնակցութեամբ նկատի առնուեցան օրակարգի բոլոր հարցերը: Կեդրոնական Վարչութիւնը ներկայացուց վերջին տարիներու եւ յատկապէս 2023 տարուոյ զանազան գործունէութեանց տեղեկագիրը, իսկ իւրաքանչիւր մասնաճիւղ ներկայացուց իր յատուկ գործունէութեան հակիրճ տեղեկագիրը:

Գոհունակութեամբ նշուեցաւ, թէ Միացեալ Նահանգներու եւ Գանատայի Թէքէեան Մշակ. Միութիւնը գործադրած է եւ կը շարունակէ գործադրել լայնածաւալ աշխարհատարած բազմերես, ազգանուէր գործունէութիւն մը, որ բացի Ամերիկայի եւ Գանատայի հայաշատ կեդրոններու մէջ կատարուած մշակութային եւ ընկերային լայն գործունէութենէն, կը կատարուի նաեւ ամբողջ Սփիւռքի եւ հայրենիքի տարածքին: Թ.Մ.Մ.-ը իր օգնութիւնը եւ օժանդակութիւնը կատարած է մանաւանդ Հայաստանի եւ Արցախի մէջ վերջին տարիներուն տեղի ունեցած ծանրակշիռ զարգացումներուն առիթով, կատարելով աղէտեալներուն, ընտանիք առ ընտանիք՝ նիւթական ուղղակի օժանդակութիւն: Ան մանաւանդ կրթական բնագաւառին մէջ մասնաւոր օժանդակութիւն կատարած է Հայաստանի մէջ իր հովանաւորած չորս դպրոցներուն եւ անոնց ուսուցիչներուն: Գիրքերու հրատարակութիւն եւ մշակոյթի գործիչները քաջալերող մրցանակաբաշխութիւններու կազմակերպելը քանի մը ուրիշ յատկանշական օրինակներն են իր կատարած գործունէութեանց:

Թէքէեանը լայն գործունէութիւն կը կատարէ մանաւանդ օժանդակելով հայ մամուլին՝ Հայաստանի «Ազգ», Պոսթընի «Պայքար», Մոնթրէալի «Ապագայ», Յունաստանի «Նոր Աշխարհ», Լիբանանի «Զարթօնք», Պուէնոս Այրէսի «Սարտարապատ» եւ Պոսթընի «The Armenian Mirror Spectator » հայկական անգլիատառ թերթերուն անխափան հրատարակութեան զօրավիգ կանգնելով:

Պատգամաւորական այս ժողովին ընթացքին կատարուեցաւ նաեւ Կեդրոնական Վարչութեան երեք անդամներու մասնակի ընտրութիւնը: Ընտրուեցաւ՝ Լոս Անճելըսէն Արա Պապայեանը, իսկ վերընտրուեցան՝ Մոնթրէալէն Արթօ Մանուկեանը եւ Լոս Անճելըսէն Գարլ Պարտագճեանը:

Ժողովի վերջաւորութեան՝ Ժողովականներու հաւաքական ներկայութեամբ եւ սրտի ջերմ խօսքերով, Մոնթրէալի Թ.Մ.Մ.եան Կեդրոնի մուտքին՝ Միութեան Մոնթրէալի Մասնաճիւղի երկարամեայ ատենապետ Նուպար Պապիկեան քողազերծումը կատարեց ` Դոկտ. Արշաւիր Կէօնճեանին Գանատայի Ընդհանուր Կառավարիչ Մէրի Սիմոնի կողմէ, Membre of the Ordre of Canada, Գանատայի քաղաքացիական բարձրագոյն շքանշանին տուչութեան նկարին: Տուչութեան պաշտօնական այս արարողութիւնը մեր գիտնական՝ Գանատահայ գաղութին հիմնական կազմակերպման մէջ, ինչպէս նաեւ համազգային բարձր վաստակ ունեցող ղեկավարին՝ տեղի ունեցած էր Հոկտեմբեր 22, 2023-ին ` Գանատայի Ընդհանուր Կառավարիչին Օթթաուայի կեդրոնատեղի՝ Rideau Hall-ի մէջ:

Երեկոյեան, կեդրոնին Արզումանեան Սրահին մէջ տեղի ունեցաւ «Ապագայ» շաբաթաթերթի 49-րդ տարեդարձին եւ Ընդհ. Պատգամաւորական ժողովին նուիրուած՝ եզրափակիչ հանդիսաւոր ճաշկերոյթ հանդիսութիւնը, աւելի քան երկու հարիւր պաշտօնական հիւրերու, նուիրատուներու, պատգամաւորներու եւ հասարակութեան ներկայութեամբ:

Այս ձեռնարկը կը վայելէր նախագահութիւնը եւ հովանաւորութիւնը Գանատահայոց Թեմի Առաջնորդ Գերշ.Աբգար Եպս. Յովակիմեանին եւ Ն. Վ. Հայաստանի Հանրապետութեան Դեսպան Անահիտ Յարութիւնեանին: Պաշտօնական սակայն ջերմ մթնոլորտի մէջ տեղի ունեցող այս ձեռնարկին ընթացքին Առաջնորդ Հօր պատգամէն ետք խօսք առին ` Մոնթրէալի Միութեան վարիչ քարտուղարուհի հանդիսավար Տիկ. Սալբի Հալաճեան Մարկոսեանը, «ԱՊԱԳԱՅ» -ի երկարամեայ խմբագիր Պրն. Աւետիս Պագգալեանը, եւ Թ.Մ.Մ.-ի Կեդր. Վարչութեան ատենապետ Դոկտ. Արշաւիր Կէօնճեանը: Ապա, կատարուեցաւ Սմսարեան բաժակի տուչութիւնը Թէքէեանի Լոս Անճելըս Մեթրօ մասնաճիւղին առ ի գնահատանք անցնող տարուայ իր աշխուժ գործունէութեան: Վերջապէս կատարուեցաւ պատուոյ արձանագրութեան մը յանձնումը Պրն. Աւետիս Ճիհանեանին որ եղած է երկար տարիներու Թէքէեանի Վարչութեան ատենապետ եւ գործօն անդամ, ինչպէս նաեւ ծառայած է Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ եկեղեցւոյ ծուխին եւ Գանատահայոց Թեմական խորհուրդին: Մանաւանդ ան նաեւ իր կարեւոր նիւթական օժանդակութիւնը բերած է Արցախի Թ.Մ.Մ.եան Բերձորի դպրոցին վերաշինութեան աշխատանքներուն եւ նաեւ այս օրերուն կրթաթոշակներու բարձրօրէն գովելի ծրագիր մը հաստատած է օժանդակելու համար Հայաստանի մէջ համալսարանական իրենց կրթութիւնը շարունակող Հայաստանաբնակ ուսանողներու:

Պաշտօնական այս ճաշկերոյթին վերջաւորութեան գործադրուեցաւ հայկական էնդրատային եւ ժողովրդական երգերու եւ նուագի բացառաբար յաջող համերգ մը:

Երաժշտական այս հայաշունչ համերգին գեղարուեստական ղեկավարն էր սիրուած երաժշտագէտ Սամուէլ Քէօշկէրեանը: Բացառիկ կատարողութեամբ նուագախումբին երաժշտական ղեկավարն էր երիտասարդ տաղանդաւոր դաշնակահար Արտէն Արաբեան: Իրենց անսպառ եւ հմայիչ ձայներով մենակատարողներն էին, օփերայի հիանալի սոփրանօ երգչուհի եւ կարեւոր առիթներով մեր բեմերուն վրայ յաճախ իր հրաշալի ձայնով ելոյթներ ունեցող Սաշա Ճիհանեանը, եւ մեզի համար իսկական յայտնութիւն մը հանդիսացած մանաւանդ աշուղական երգերու արտակարգ կատարողութեամբ թէնօր Սամուէլ Աշըգեանը: Ինչպէս միշտ նոյնպէս մեր ձեռնարկները ծաղկեցնող Սիլվա Ամատունին կ՚ընկերակցէր իր հրաշալի հնչեղութեամբ կատարած ասմունքով:

Այս տաղանդաշատ խումբը մեզ ուղղակի փոխադրեց Հայաստան: Դժուար եղաւ բաժնուիլ իրենցմէ մանաւանդ երբ իրենց երգացանկին վերջաւորութեան հնչեցուցին Էդգար Յովհաննիսեանի Երեւան Էրեբունին, ոտքի հանելով ամբողջ սրահը, ձայնակցելու համար իրենց, եւ վերջաւորութեան իրենց գնահատանքը յայտնելու պրաւօներով եւ երկար ծափահարութիւններով:

Այս շաբաթավերջը յաղթանակ մըն էր ի պատիւ Թէքէեան Մշակութային Միութեան մեծ ընտանիքին, ի պատիւ Միութեան Մոնթրէալի մասնաճիւղին, եւ ի պատիւ մեր մշակոյթին:

Ջերմօրէն կը շնորհաւորենք Թէքէեանի ղեկավարութիւնը, անդամակցութիւնը եւ անոնց կողքին կանգնած գիտակից նուիրատուներու եւ բարեկամներու աշխարհատարած մեր լայն շրջանակը:

ԹՂԹԱԿԻՑ

# Օպերային արվեստի փայլուն աստղը. Լիպարիտ Ավետիսյան

ՍԵՅՐԱՆՈՒՀԻ ԳԵՂԱՄՅԱՆ

Վերջին տարիներին հայաստանյան եւ աշխարհի տարբեր երկրների օպերային հայտնի բեմահարթակներում փայլում է հայազգի տաղանդավոր երգիչ-երգչուհիների մի աստղաբույլ, որի մեջ ամենավառ, ամենասիրված անուններից մեկը Երեւանի Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնի մեներգիչ, ՀՀ վաստակավոր արտիստ **Լիպարիտ Ավետիսյանն** է:

Ինչո՞վ է նա, այդ երիտասարդ երգիչն արժանացել ունկնդրի (ոչ միայն հայ, այլեւ օտարազգի) բացառիկ համակրանքին ու հիացմունքին: Իհարկե, ամենից առաջ իր բնատուր գեղեցիկ, հարուստ, թավշյա, զգացմունքային, նրբագույն ելեւէջներին անթերի տիրապետող ձայնով, ապա բեմական հմայիչ կերպարով ու կեցվածքով, եւ իհարկե, իր ջերմ, վառ արտահայտված մարդկային որակներով... Սակայն, թվարկածս որակները գուցե եւ չհասնեին նման բարձրագույն ներդաշնակության, եթե չլինեին նրա բացառիկ աշխատասիրությունը, բծախնդրությունը, պատասխանատվության զգացումն ու ինքնամոռաց նվիրումն իր մասնագիտությանը, բեմին եւ ունկնդրին:

Ծնվել է 1990-ին՝ Երեւանում: Փոքր տարիքից տեղափոխվել են Ուկրաինայի Թեոդոսիա քաղաքը, որտեղ էլ անցել է նրա մանկությունը եւ արվել են դեպի արվեստի բարձունքները տանող առաջին քայլերը:

«Երգելու շնորհքը ժառանգել եմ հայրական կողմից՝ պապիկիցս ու հայրիկիցս: Ճիշտ է, նրանք մասնագիտական կրթություն չեն ստացել, բայց շատ գեղեցիկ ձայն ունեին եւ սիրում էին երգել: Ես նույնպես ամենավաղ տարիքից երգել եմ: Շատ ակտիվ երեխա եմ եղել եւ դպրոցական տարիներից մասնակցել եմ անսամբլի, երաժշտական, թատերական խմբակների: Ընդհանրապես, սիրել եմ այն ամենը, ինչը կապված էր բեմի հետ: Տեսնելով իմ հետաքրքրությունները եւ ընդունակությունները, մայրս ինձ տարավ երաժշտական դպրոց, ինչն էլ ինձ համար ճակատագրական դարձավ: Վոկալի գծով իմ բախտը մեծապես բերեց. ես ընկա մի հրաշալի ուսուցչուհու՝ **Վերա Ռիբալկոյի** մոտ, որն ավարտել էր Օդեսայի կոնսերվատորիան, եւ հենց նա էլ իմ մեջ սերմանեց սերը դեպի դասական երգեցողությունը, դեպի օպերային արվեստը, - պատմում է Լիպարիտը:

Տասնվեց ու կես տարեկանում իրականանում է նրա մեծ երազանքը. նա մեկնում է Մոսկվա եւ ընդունվում Մոսկվայի կոնսերվատորիա: Դա մի տեսակ աներեւակայելի իրողություն էր: «Երբեմն հավատս չէր գալիս, որ ես գտնվում եմ այն տարածքում, որտեղ քայլել, աշխատել եւ ստեղծագործել են մեծն Չայկովսկին, Շոստակովիչը, որ կարող եմ հպվել այն առարկաներին, որոնց հպվել են նրանք: Կարծես երազ լիներ այդ ամենը, - հիշում է Լիպարիտն իր մոսկովյան ուսումնառության առաջին տարին:

Իհարկե, այդ երազային զգացողությունները որոշ ժամանակ անց իրենց տեղը զիջեցին իրականությանը, որն արդեն վարդագույն չէր, որովհետեւ պետք էր տքնաջան աշխատել, պետք էր փորձել քաղել այն ամենը, ինչ կարող էր տալ այդ նշանավոր բուհը:

Եվ նա սկսում է բուռն, լիաթոք եւ լիարժեք աշխատել, օգտվելով այն բոլոր հնարավորություններից, որոնք ու-



սանողների առջեւ բացում էր Մոսկվայի նշանավոր երաժշտանոցը:

Այդ ընթացքում է, որ Մոսկվայի Նեմիրովիչ-Դանչենկոյի անվան օպերային թատրոնում ծանոթանում է այսօր արդեն միջազգային լայն ճանաչում ունեցող հայ տենորներից մեկին՝ Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի շրջանավարտ **Արսեն Սողոմոնյանին** եւ հիանալով նրա կատարողական արվեստով՝ հարցնում է, թե Երեւանում ո՞վ է եղել դասախոսը: Իմանալով այդ անունը, նա Երեւան է գալիս եւ անմիջապես գտնում է նրան՝ պրոֆեսոր **Ռաֆայել Հակոբյանցին**: «Ես երբեք չեմ մոռանա մեր առաջին հանդիպումը եւ զրույցը կոնսերվատորիայի 321 սենյակում: Այդ օրվանից այդ լսարանը դարձավ իմ սրբություն սրբոցը, ես հասկացա, որ Ռաֆայել Հակոբյանցը հենց ա՛յն մարդն է, որի մոտ ես ուզո՛ւմ եմ սովորել... Հայաստանում մութ, ցուրտ տարիներ էին, կոնսերվատորիայում վերանորոգման աշխատանքներ էին կատարվում, սակայն Ռաֆայել Հակոբյանցի վերաբերմունքն այնքան ջերմ էր, ուսուցման ընթացքն այնքան հագեցած եւ արդյունավետ, որ ամբողջովին մոռացնել էին տալիս բոլոր անհարմարությունները... Տարիների ընթացքում մեր հարաբերությունները վերաճեցին սերտ ընկերության, մարդկային անքակտելի բարեկամության... Ես իմ ուսուցչի հանդեպ այսօր էլ խորին երախտագիտության զգացում ունեմ, եւ անասելի կարոտում եմ նրան...», - վերհիշում է Լիպարիտը:

Առաջին դերը, որ վիճակվեց խաղալ Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնի բեմում խաչեղբոր փոքրիկ դերն էր՝ Արմեն Տիգրանյանի «Անուշ» օպերայում, որից հետո շատ արագ ընդլայնվեց նրա խաղացանկը՝ Ալֆրեդո (Վերդիի «Տրավիատա»), Դոն Խոսե (Բիզե «Կարմեն»), երիտասարդ գնչու (Ռախմանինով «Ալեկո») եւ անշուշտ, Սարո (Ա. Տիգրանյանի «Անուշ») եւ այլն:

Եվրոպայում Լիպարիտի առաջին բեմելը տեղի ունեցավ Գերմանիայի Քյոլն քաղաքի օպերային թատրոնում, որտեղ հանդես եկավ Ֆենտոնի դերերգով՝ Վերդիի «Ֆալստաֆ» օպերայում՝ արժանանալով ինչպես ունկնդիրների, այնպես էլ երաժշտական քննադատների բարձր գնահատանքին: Դրան հաջորդեցին Ալֆրեդոյի դերակատարումը Վերդիի «Տրավիատայում»՝ Լոնդոնի Քովենթ Գարդեն արքայական եւ Սիդնեյի օպերային թատրոններում: Այսօր արդեն նրա դերերի եւ օպերային թատրոնների անվանումների թվարկումը էջեր կարող է զբաղեցնել: Երգչի գործունեության 98%-ը ծավալվում է արտերկրում, քանի որ կան բազմաթիվ գործեր, որոնք մեզ մոտ չեն բեմադրվում, մինչդեռ նա բազմաթիվ հրավերներ է ստանում տարբեր՝ նշանավոր օպերային թատրոններից՝ ստանձնելու այս կամ այն դերը: Առավել հաճախ նա հանդես է գալիս Լոնդոնի թագավորական Քովենթ Գարդենում (Նեմորինո) «Սիրո ըմպելիք», (Ալֆրեդո) «Տրավիատա», (Մանտուայի դուքս) «Ռիգոլետտո», (Ռուդոլֆ) «Բոհեմ», Թեատրո Կոլոնում՝ (Ֆաուստ) «Ֆաուստ», Սիդնեյի, Դրեզդենի, Լոս Անջելեսի, Բավարիայի, Նիդեռլանդների, Տուրինի եւ բազմաթիվ այլ քաղաքների օպերային թատրոններում, համերգային կատարումներով՝ Բեռլինի, Բադեն-Բադենի եւ բազմաթիվ այլ քաղաքների սիմֆոնիկ նվագախմբերի հետ: Եվ ամենուր բացառիկ ջերմ ընդունելություն, անվանի երաժշտագետների բարձրագույն գնահատանքի խոսքեր... Ահա հարյուրավոր այդպիսի կարծիքներից մի քանիսը.

*«Լիպարիտ Ավետիսյանի ձայնը Ալֆրեդոյի դերում այնքան ցնցող է, որ ուզում ես նրա թավշյա վիբրատոն տանել ու մտապես պահել քեզ հետ, որպեսզի հուսահատության ծանր պահերին կարողանաս դիմանալ...»,* գրում է անգլացի երաժշտագետ **Էնդրյու Լոհմենը**՝ 2023 թվականին Լոնդոնի Արքայական թատրոնում (Royal Opera House) տեսնելով Վերդիի «Տրավիատա» օպերայում Լիպարիտի Ալֆրեդոն:

*«Տենոր Լիպարիտ Ավետիսյանը մեծ հայտնագործություն է. ձայնը ճկուն է, տեմբրը՝ մաքուր, վոկալ գիծը կանոնավոր: Նա հիասքանչ էր հատկապես իր առաջին մեներգում՝ «La donna e mobile»-որը նա կատարեց բացառիկ նրբությամբ եւ առանց ավելորդ ծեքծեքումների., ինչպես սովորաբար ընդունված է կատարել: Լիպարիտը տենոր է, որին պետք է հետեւել, նա մեծ ապագա ունի (արդեն ելույթներ է ունեցել Քովենթ Գարդնում) տիրապետում է այնպիսի որակների, որոնք յուրահատուկ են հատկապես բելկանտոյի համար»*: **Շտեֆանե Լելիվր** Stephane Lelievre, Premiere Loge, 27.08.2022

*«Լիպարիտ Ավետիսյանը Ալֆրեդոյի արիան կատարում է ոչ միայն թեթեւությամբ, այլեւ ոսկերչական ճշգրտությամբ, նա չափից ավելի չի հակվում դեպի զգացմունքայնությունը եւ չի ճնշում գերզգայնությամբ: Նա շատ պարզ ու բնական է յուրաքանչյուր երաժշտական արտահայտության մեջ: Նրա հզոր եւ բացառիկ ճիշտ դրված ձայնը հավասարապես զորավոր է անգամ կիսատոներում, ինչպես օրինակ «Che gelida manina» եւ «O Mimi tu piu non torni» մեներգերում»:* **Էմանուել Անդրյու** Emmanuel Andrieu, Opera national du Capitole:

Եվ այնուամենայնիվ, Լիպարիտի հայացքը միշտ դեպի Հայաստանն է, այստեղ իր տունն է, ընտանիքը, հոգին ու սերը, տաղանդավոր կինը՝ օպերային երգչուհի **Ալինա Փահլեւանյանը**, որի կատարումներին Լիպարիտը մոտենում է անձնական բծախնդրությամբ ու պատասխանատվությամբ, իր սիրելի հանդիսատեսի երջանկությունից փայլող, երբեմն արցունքոտված աչքերը, որոնք, ինչպես ինքն է ասում՝ երբեք ուրիշ ոչ մի բանի հետ չի փոխի...

Ասվածի փայլուն ապացույցները Լիպարիտ Ավետիսյանի այս տարի՝ 2024 թ. հուլիսին նրա մասնակցությունն էր մի քանի օպերային ներկայացումների, ինչպես նաեւ Պուչինիի «Բոհեմ» օպերայի համերգային կատարումը՝ Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի (նվագավար՝ **Ալեքսանդր Թոփչյան**) հետ՝ Ռուդոլֆի դերերգերով, իսկ գագաթնակետը եղավ մենահամերգը՝ հուլիսի 28-ին Երեւանի Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում: Արեւմտաեվրոպական կոմպոզիտորների նշանավոր օպերաների ամենասիրված դերերգերի եւ հայ կոմպոզիտորների՝ Առնո Բաբաջանյանի, Ալեքսանդր Հարությունյանի, Կոնստանտին Պետրոսյանի հանրահայտ երգերի հուզական, փայլուն կատարումներն ի հայտ բերեցին Լիպարիտ Ավետիսյանի ձայնի ամբողջ գունագեղությունը, յուրահատուկ ջրվեժող որակները՝ հոգու բացառիկ տոն պարգեւելով ունկնդիրներին: Մասնավորապես Կոնստանտին Պետրոսյանի «Հայաստան» երգի կատարումը, որի մեջ լիուլի արտացոլված էր երկրի, նրա գեղեցկությունների ու ժողովրդի հանդեպ անսահման սերը՝ արցունքոտվելու աստիճան հուզում առաջացրեց դահլիճում... Լիպարիտի արվեստից հմայված մարդիկ շուրջ 15 րոպե խելահեղ ծափահարություններով ու վանկարկումներով իրենց հիացումը, սերն ու հպարտությունն էին հղում երգչին... Իսկ երբ հիացումը, հպարտությունն ու սերը միահյուսվում են, ապա վերածվում են բարձրագույն մի զգացումի, որ կոչվում է երջանկություն, զգացում՝ որին այնքան կարոտ է բազում դժվարությունների ու ծանր ապրումների միջով անցած եւ անցնող մեր ժողովուրդը:

Երջանկության այդ թանկ զգացողությունն ուներ նաեւ ինքը՝ երգիչը. «Երեւանյան մենահամերգից ստացած սերն ու էներգիան մի քանի տարի կբավականացնի ինձ: Ես իսկապես այնքան հուզված էի, որ նույնիսկ խոսել չէի կարող, հանդիսատեսից ստացած բուռն զգացողություններն ու ջերմությունն ընդմիշտ կմնա իմ սրտում... Ինձ դա շատ պետք էր, որովհետեւ, դա ինձ զգացնել տվեց նաեւ ի՛մ արած գործի կարեւորությունը, ես հասկացա, որ պետք եմ իմ ժողովրդին, որ կարողանում եմ ինչ-որ չափով փոխհատուցել ի վերուստ ինձ տրված շնորհների համար. դա շատ կարեւոր զգացողություն է, - խոստովանում է նա համերգից հետո տված հարցազրույցում:

Այս պահին, երբ գրվում է սույն հոդվածը, սիրելի երգիչը դարձյալ մեկնել է արտասահմանյան երկարաժամկետ հյուրախաղերի:

Թող մեր սերն ու օրհնությունը ուղեկից լինեն նրան ու դարձյալ վստահեցնեն իր գործի կարեւորության մասին, հավաստիացնեն, որ իր հաջողությունները մեր երկրի ու ժողովրդի հաջողություններն են, որ հայաստանյան ունկնդիրն իր հոգում գորովանքով է պահում իր ձայնը՝ որպես բալասան, որը կարող է «դժվար պահերին օգնել հաղթահարելու հուսահատության ծանր զգացումը...»:

ԱՐԾՎԻ ԲԱԽՉԻՆՅԱՆ

# Դանիել Կապելյան. Ֆրանսահայը Կորեայից

*ԵՐԵՎԱՆ-ՍԵՈՒԼ - Դանիել Կապելյանը կորեաբնակ հայազգի ֆրանսիական ստեղծագործ տնօրեն, համադրող եւ արտադրիչ է: Նախքան Հարավային Կորեայում հաստատվելը, նա տարիներ շարունակ աշխատել է Փարիզի արվեստի եւ մշակույթի ոլորտում որպես անկախ հեղինակ եւ հեռուստատեսային եւ մուլտիմեդիայի արտադրիչ: 1998-2005 թթ. եղել է Փարիզ 8 համալսարանի հիպերմեդիայի ամբիոնի դոցենտ եւ Ֆրանսիացի հեղինակների գիլդիայի մուլտիմեդիա բաժնի փոխնախագահ: Հինգ տարի (2010-2015 թթ.) եղել է Կորեայում Ֆրանսիայի դեսպանատան կցորդը տեսալսողական բնագավառում, կինոյի, հեռատեսիլի, թվային բովանդակության եւ էլեկտրոնային երաժշտության բաժնի վարիչը: 2015-ին դարձել է կորեական «Հյունդայ քարդ» վարկային քարտերի ընկերության գործադիր տնօրեն Թեդ Չունգի միջազգային մշակութային խորհրդատուն: Երկու տարի շարունակ նա հրատարակել է «Թրենդս րեփորթ. արվեստ, մշակույթ, ապրելակերպ, նորարարություն, ազդանշաններ» եռամսյա հանդեսը: 2017-ին դարձել է Սեուլի «ՕՄԱ սփեյս» ստեղծագործ արվեստի եւ դիզայնի ստուդիայի գեղարվեստական ղեկավարը՝ ստեղծելով ժամանակակից արվեստի գործեր: Նա նաեւ բրենդների, մասնավոր խմբերի եւ միջազգային հաստատությունների տրամադրում է արվեստի եւ մշակույթի միջոցառումների ռազմավարություն, մշակում, հայեցակարգ եւ արտադրություն:*



**-Հարգելի՛ Դանիել, ինչպե՞ս կբնութագրեք Կորեայի ժամանակակից արվեստի ոլորտը:**

-Կորեայի արվեստի ոլորտն աշխույժ է, նրա «տեսականին» մեծ է՝ փոփ մշակույթ, երաժշտություն, կինո, ժամանակակից արվեստ եւ դիզայն, թվային արվեստ, նաեւ արհեստներ: Այն ավանդույթի եւ նորարարության մի հետաքրքրական խառնուրդ է: Վերջին 14 տարիների ընթացքում ինձ համար եղել է ֆանտաստիկ ասպարեզ: Թեեւ այս ոլորտում շատ օտարերկրացիներ չկան, ես հնարավորություն ունեցա մասնակցելու մի քանի շատ ուշագրավ նախագծերի եւ ցուցահանդեսների կազմակերպմանը՝ որպես արվեստագետ, համադրող կամ գեղարվեստական ղեկավար, այստեղ՝ Կորեայում եւ արտերկրում խթանելու համար կորեական գեղարվեստական եւ մշակութային փափուկ ուժը:

**-Ինչո՞վ է եզակի «ՕՄԱ սփեյսը» Կորեայի մշակութային խճանկարում:**

-Օման կորեացի նկարչուհի եւ դիզայներ է՝ տեքստիլի ոլորտում մեծ փորձով: 2000-ականներին Լոնդոնում ապրած տարիներին նա աշխատել է նորաձև հագուստի դիզայներ, վաղամեռիկ Ալեքսանդր Մաքքուինի հետ: 2010-ին վերադառնալով Կորեա՝ Օման բացել է իր սեփական ստուդիան եւ սկսել է ստեղծել ավանդական, հազվագյուտ գործվածքներից եւ ժամանակակից ձեւվածքներով բացառիկ հագուստներ: Ես միացա նրա ստուդիային 2017 թվականին, որպեսզի օգնեմ նրան՝ իր փորձն ու գիտելիքները փոխանցելու ժամանակակից արվեստի եւ դիզայնի ոլորտ՝ միախառնելով ավանդական տեխնիկան նոր տեխնոլոգիաների, ձայնի եւ տեսանյութի հետ: Նա շատ յուրահատուկ կերպար է կորեական արվեստի ասպարեզում:

**-OMA Space-ը ստեղծում է նաեւ այսպես կոչված ներսուզող ինստալյացիաներ (միջավայրեր կամ տարածքներ, որոնք պարուրում են դիտողին՝ ներգրավելով տարբեր զգայարաններ): Վենետիկի բիենալեի տաղավարներում մի քանի անգամ հաճույքով հաճախել եմ այդպիսի ինստալյացիաների՝ նավարկելով նոր, կիսով չափ վիրտուալ միջավայրերում: Ո՞րն է ամենից յուրահատուկն արվեստի այս ձեւի մեջ:**

-2019 թվականին Գուցլի միջոցով մենք սկսեցինք ստեղծել ներսուզող ինստալյացիաներ: Մենք առաջիններից էինք, որ ստեղծեցինք ինստալյացիաներ, որ կոչվեցին «ֆիջիթալ» (ի տարբերություն դիջիթալի): Դրանք ֆիզիկական եւ թվային տարրերի համադրություն են, այսինքն՝ տեխնոլոգիան անխափան կերպով ներդրված է իրական, շոշափելի ճարտարապետության մեջ: Մեր ինստալյացիաները բավական եզակի են այն առումով, որ մեր ստեղծածը «փոխակերպող արվեստ» է՝ ուղղված թե՛ մարմնին, թե՛ հոգուն: Դրանք բարձրացնում են մեր մտասուզող ստեղծագործությունները փորձողների հոգեվիճակը: Մեզ հաջողվել է այդ մոտեցումը, եւ մենք ծրագրում ենք մի նոր գլոբալ, շրջիկ ծրագիր, որը դուրս է գալիս արվեստի ներկա սահմաններից:

**-Ձեր ստուդիան միավորում է մի խումբ արվեստագետների եւ համադրողների՝ ակտիվացնելով միջոցների եւ տաղանդների լայն գլոբալ ցանցը: Երբեւէ համագործակցե՞լ եք հայ արվեստագետների հետ:**

-Մինչ այժմ ես պատիվ եմ ունեցել համագործակցել դուդուկահար **Արսեն Պետրոսյանի** հետ: Մեր թրեքը կարող եք լսել այս հղմամբ՝ https://soundcloud.com/kay-dorsay/arsen-petrosyan-9-new-mix Արսենն այժմ միջազգային ճանաչում ունի, նա վարպետ է, որն ունակ է նվագել տարբեր երկացանկեր՝ յուրահատուկ մոտեցմամբ եւ հնչումով: Հուսով եմ՝ նորից կհամագործակցեմ նրա եւ շատ մեծ թվով հայաստանցի այլ արվեստագետների հետ:

**-Իսկ առհասարակ Կորեայում հայազգի մարդկանց հանդիպե՞լ եք:**

-Իրականում՝ ոչ: Ես երբեք ակտիվորեն չեմ փնտրել նրանց Կորեայում: Իմ կյանքը պայմանավորված է աշխարհի տարբեր ծայրերից եկած նշանավոր մարդկանց հետ պատահական հանդիպումներով: Միգուցե հայերի հետ հանդիպումները կպահեմ կյանքիս հետագա փուլերի համար...

**-Ի՞նչ գիտեք ձեր հայ նախնիների մասին եւ կա՞ն արդյոք ձեր ընտանիքում հայկական ավանդույթներ:**

-Ես կրում եմ հայրական պապիս՝ Դանիել Կապելյանի անունը: 1921 թվականին ֆրանսիական նավատորմի հետ նա Սեւաստոպոլից փախել է Բիզերտ՝ Թունիս: Այնտեղ ամուսնացել է եւ ունեցել երկու որդի: Երկու եղբայրներն ամուսնացել են երկու քույրերի հետ եւ 1957 թվականին փախել են Թունիսի անկախության համար մղված պատերազմի ժամանակ: Նրանք ապաստանել են Ֆրանսիայի հարավում՝ Վեզոն Լա Ռոմենում, որտեղ ամբողջ ընտանիքը միասին է ապրել: Միակ ավանդույթը, որ ես ժառանգել եմ իմ ընտանիքից, այս «աքսորականի ԴՆԹ»-ն է: Կյանքիս գրեթե կեսն անցկացրել եմ արտասահմանում: Կարծում եմ, ես դեռ վերամշակում եմ այդ աքսորի տրավման...

**-Երբեւէ եղե՞լ եք Հայաստանում: Ոչ միայն որպես ձեր նախնիների երկիր, այլեւ, կարծում եմ, այն պատճառով, որ մեր ժամանակակից արվեստը պետք է հետաքրքրի ձեզ:**

-Ես երբեք չեմ եղել Հայաստանում: Ճանապարհորդել եմ աշխարհով մեկ՝ միշտ իմանալով, որ մի օր գալու եմ այստեղ: Զգում եմ, որ մոտենում է այդ օրը, եւ ես նախատեսում եմ որդուս եւ աղջկաս հետ այցելել: Համոզված եմ, որ այդտեղ մեզ սպասում են լավ մարդիկ եւ լավ արվեստ: Ինձ հետաքրքրական կլինի բացահայտել այդ ասպարեզը...

ԿՈՆՍՏԱՆՏԻՆ ՊԵՏՐՈՍԵԱՆ
Կոմպոզիտոր

# Վահան Արծրունու համերգը՝ նուիրուած Կոմիտաս Վարդապետի 115-ամեակին

«Կոմիտաս՝ ԵՐԱԺԻՇՏ ԵՒ ԲԱՆԱՍՏԵՂԾ» համերգային նախագիծը մտայղացել է երգիչ, կոմպոզիտոր **Վահան Արծրունին**, Կոմիտաս Վարդապետի 155-ամեակին ընդառաջ:

Այն շարունակական բնոյթ է կրում՝ նպատակ ունենալով համերգաշարի տարբեր համերգային ծրագրերի միջոցով ներկայացնելու կոմիտասեան երաժշտական ժառանգութեան բոլոր դրսեւորումները, ինչպէս նաեւ վարդապետի պոէզիան՝ համազօր կերպով:

Նախագիծն իր տեսակով եւ գեղագիտութեամբ բացառիկ է, քանի որ ներառում է Կոմիտասի բնագրային վոկալ, վոկալ-գործիքային, դաշնամուրային եւ երգչախմբային ստեղծագործութիւնները, ինչպէս նաեւ նրա երաժշտական ժառանգութեան բազմաբնոյթ մեկնութիւնները: Իսկ Կոմիտասի քնարերգութիւնը ներկայացուած է երգիչ եւ կոմպոզիտոր Վահան Արծրունու «Կոմիտաս. Տաղը Յայտնութիւն» երգաշարով:

Ամիսներ առաջ սկսուած նախագծի չորս տարբեր համերգային ծրագրերում հանդէս էին եկել՝

ՀՀ վաստակաւոր արտիստ, Երեւանի պետական կոնսերվատորիայի պրոֆէսոր, երգչուհի **Աննա Մայիլեանը**, որ ներկայացրել էր Կոմիտասի գեղջկական ու հոգեւոր բնագրային «չլսուած» երգերի կատարումները,



«Երեւան» լարային քառեակը, որի կատարմամբ հնչեցին կոմիտասեան եղանակների Սերգեյ Ասլամազեանի հանրայայտ մշակումները լարային քառեակի համար:

Հայաստանի ֆիլհարմոնիկ նուագախմբի կոնցերտմայստերը, վիրտուոզ ֆլեյտահար **Նարեկ Աւագեանը** եւ ամերիկեան հանդիսատեսին արդէն քաջ ծանօթ ֆլէյտահարուհի **Նելլի Մանուկեանը** նոյնպէս մասնակցել էին համերգներին, Վահան Արծրունու տրիոյի կազմով:



ՀԲԸՄ-Հայաստան համերգասրահում կայացած յաջորդ համերգին մասնակցել էր KV ART ENSEMBLE, որը յայտնի է Հայաստանում Պարոքքօ եւ Վերածննդի շրջանի երաժշտութեան կատարումներով: Անսամպլի նուագակցութեամբ հնչել էր երգիչ, կոմպոզիտոր Վահան Արծրունու «Կոմիտաս. Տաղը Յայտնութիւն» երգաշարը, գրուած Վարդապետի տաղը բանաստեղծութիւնների հիման վրայ: Երաժշտութեան հեղինակ՝ Վահան Արծրունի:

Յաջորդ համերգին, բացառիկ ելոյթով, հանդէս էր եկել «Նարեկեան Զանգակներ» ( Narek Bell Choir ) համոյթը, Միացեալ Նահանգներից, որի հիմնադիրն ու ղեկավարը **Տէր Յովհան Քահանայ Խոճա-Էյնաթեանն** է, ում զանգակների համոյթի համար արուած կոմիտասեան հոգեւոր եւ աշխարհիկ երաժշտութեան մշակումների կատարումը հիացրեց եւ գերեց «Առնօ Բաբաջանեան» համերգասրահում ներկայ հանդիսատեսին:

«Կոմիտաս՝ ԵՐԱԺԻՇՏ ԵՒ ԲԱՆԱՍՏԵՂԾ» նախագծի թուով 5-րդ համերգը կայացաւ սեպտեմբերի 16-ին , Կոմիտասի անուան կամերային երաժշտութեան տանը: Համերգին մասնակցում էին՝

**Վահան Արծրունի**, երգիչ, կոմպոզիտոր,

ԵՐԵՒԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄԵՐԱՅԻՆ ԵՐԳՉԱԽՈՒՄԲԸ, խմբավար **Քրիստինա Ոսկանեանի** ղեկավարութեամբ, մեներգչուհի՝ Նելլի Քալաշեան,

KV ART ENSEMBLE հետեւեալ կազմով՝

**Նարեկ Աւագեան՝** ֆլեյտա, **Նարեկ Սահակեան՝** 1 ջութակ, **Իվեթա Քոռքինա՝** 2 ջութակ, **Հայկ Տէր- Յովհաննիսեան՝** ալտ, **Վահէ Դանիէլեան՝** թաւջութակ, **Եւա Գէորգեան՝** քնթրապաս:

Համերգային ծրագրում Կոմիտասի հանճարեղ խմբերգերն էին եւ Վահան Արծրունու «Կոմիտաս. Տաղը Յայտնութիւն» երգաշարը:

Իրար յաջորդող խմբերգային ու վոկալ-գործիքային կատարումները, երաժիշտների կատարողական արուեստի բարձր մակարդակը եւ երաժիշտների՝ Կոմիտասի հանդէպ տածած անսահման ակնածանքն ու մեծութեան առաջ խոնարհումը ստեղծեցին գեղագիտական անկրկնելի մթնոլորտ եւ ոգեղէն տարածաչափութիւն, ուր իշխում էր Վարդապետի անզուգական պոէզիան, երաժշտութիւնը:

Նախագծի համերգները, տարբեր մենակատարների եւ նուագախմբերի մասնակցութեամբ, նախատեսւում է շարունակել մինչեւ 2024 տարեվերջ:

«ՊԱՅՔԱՐ», հոկտ. 6, 2024 թ.

# Արթուր Ասատրյան. «Ապրելով եւ աշխատելով Հայաստանից հեռու` Հայաստանը միշտ իմ սրտում է»

ԳՈՀԱՐ ԲՈՏՈՅԱՆ

**ՌԴ-ում «Ազգ»-ի հատուկ թղթակից**

Հոկտեմբերի 6-ին Մոսկվայի հայկական «Սուրբ Պայծառակերպություն» եկեղեցու «Տաղան» ցուցասրահում տեղի ունեցավ մեր ժամանակների ամենածավալուն, վեհաշուք եւ մանավանդ` հայ ազգի ներկայացուցիչների համար անչափ նվիրական ու արժեքավոր նախաձեռնություններից մեկի` բարեգործ, գործարար եւ հասարակական գործիչ **Արթուր Ասատրյանի** հեղինակային` «Վերածնունդ» ցուցահանդեսի հանդիսավոր բացումը:

Այս բացառիկ ցուցադրության մեկնարկը ոչ միայն մեր հայրենակից Արթուր Ասատրյանի հայրենասիրության եւ իր ժողովրդին նվիրվածության անզուգական վկայությունն է, այլեւ նրա շուրջ 30 տարիների որոնումների արդյունքը` հոգեւոր եւ մշակութային ժառանգության փառահեղ արտացոլանքը` կերտված նոր սերունդների ոգեշնչման եւ հայ ինքնության պահպանման ու փայլուն վերհառնումի համար:

Ցուցահանդեսում ներկայացված էին Արթուր Ասատրյանի նախաձեռնությամբ ու միջոցներով վերականգնված հայոց թագավորների ու թագուհիների դիմանկարները, ինչպես նաեւ հայ ժողովրդի պատմության առանցքային իրադարձությունները պատկերող կտավները:

Արթուր Ասատրյանը, կամ ինչպես լրատվամիջոցներն են սիրում օգտագործել նրա պատվանունը` **Դոն Պիպոն**, հարգված, ճանաչված եւ մեծ անուն ու համբավ վայելող անձնավորություն է: Այդ ճանաչմանը նա հասել է իր աշխատասիրությամբ, գործարարությամբ եւ բարեգործական ձեռնարկումներով:

Արթուր Ասատրյանը ծնվել է, մեր հոգեւոր մայրաքաղաքում` Էջմիածնում: Միջնակարգ կրթությանը զուգահեռ հաճախել է երաժշտական դպրոց, զբաղվել է սպորտով եւ այս երկու բնագավառներում էլ` սպորտում եւ երաժշտության մեջ, իր համառության եւ աշխատասիրության շնորհիվ հաջողությունների է հասել: Ունի տասը երգ, որոնք, ինչպես ինքն է ասում, Հայաստանում երգում են` առանց անգամ իմանալու հեղինակի անունը:

- Ես շատ ուրախ եմ, որ մարդիկ սիրում են իմ երգերը,- ասում է պրն. Ասատրյանը:- Հիմնականում սկզբից գրում եմ բառերը, ապա երաժշտությունն եմ հորինում: Պատահել է, որ բառերը գրելուց անմիջապես հետո սկսել եմ երգել, որից հետո տվել եմ երաժիշտներին` կատարելու:

Արթուր Ասատրյանը նաեւ շատ լավ նկարում է:

- Ես նկարում եմ իմ հաճույքի համար,-ասում է նա:- Գույներն ինձ դուր են գալիս: Պրոֆեսիոնալ չեմ, պարզապես հոբբիի պես բան է, նյարդերը հանգստացնելու համար եմ նկարում:

Արթուր Ասատրյանն ապրել է երեք տարբեր երկրներում` Հայաստանում, Ռուսաստանում եւ Իտալիայում, վերջինում` շուրջ 17 տարի:

- Իմ կյանքը բաժանված է երեք մասի` եւ այդ երեք տեղերում էլ ապրել եմ հետաքրքիր եւ բովանդակալից կյանքով եւ իմ բարի գործերով թողել եմ լավ հայի իմ անունը,- ասում է նա:- Ներկայումս ավելի շատ զբաղված եմ մշակութային այս մեծ ծրագիրը կյանքի կոչելու գործով: Սա լավ առիթ է հայկական Վերածննդի հետ կապված իմ երեք տասնամյակների աշխատանքը ճիշտ ներկայացնելու ամբողջ աշխարհին:

Ասեմ, որ ես դեռ մանուկ հասակից միշտ հետաքրքրվել եմ պատմությամբ եւ շատ հարցերի պատասխաններ եմ գտնում պատմության էջերում: Տարիների ընթացքում եկել եմ այն համոզման, որ հենց պատմությունն է հայրենասիրության ամենահզոր աղբյուրը: Նրա օգնությամբ երեխաների ու երիտասարդների մեջ ավելի հեշտ է սերմանել հայրենիքի հանդեպ սերը, ազգային արմատների նկատմամբ հետաքրքրությունը եւ արդարության ձգտումը: Այսպես ինձ հաջողվել է վերականգնել հայոց 50 թագավորների դիմանկարներ, ինչպես նաեւ ստեղծել 109 կտավներ, որոնք պատկերում են հայ ժողովրդի կյանքի առանցքային պատմական իրադարձությունները:



Այնպես է ստացվել, որ հայ ժողովուրդը` մարդկության ամենահինավուրց ժողովուրդներից մեկը, հազարամյակների ընթացքում անցնելով բազմաթիվ փորձությունների միջով, չի կարողացել պահպանել իր բոլոր ձեռքբերումները: Սակայն տարբեր դարաշրջանների շատ մեծանուն պատմիչներ բազմաթիվ հիշատակումներ են թողել Հայաստանի, նրա մշակույթի եւ ղեկավար դեմքերի մասին:

Պատմաբանների օգնությամբ ես արդեն 30 տարի է, ինչ հավաքում եմ այդ բոլոր տեղեկությունները, ամբողջացնում դրանք, իսկ արհեստավարժ ու հմուտ նկարիչների թիմը այն վերարտադրում է կտավների վրա: Սա հիմնավոր եւ տքնաջան աշխատանք է, որի արդյունքում հայ ժողովրդի պատմությունն իր ողջ վեհությամբ հառնում է մեր առջեւ:

Այդ բոլոր գործերի վերջնական հանգրվանը կլինի մեծ թանգարանը, որը ես նախատեսում եմ կառուցել Մայր Հայաստանում` իմ տան տեղում:

Իսկ մինչ այդ` Ռուսաստանից հետո ուզում ենք Եվրոպայում, ապա Ամերիկայում ցուցադրել մեր մեծ հավաքածուն, որպեսզի համայն հայությունը թափանցելով պատմության խորքերը` ճանաչի իր արմատները:

Այն հարցին, թե այս մեծ ծրագիրը կյանքի կոչելուց հետո ո՞րն է լինելու հաջորդ ձեռնարկումը, մեր հայրենակիցը պատասխանում է.

- Տեսնել պայծառ Հայաստան, ինչով կարող ենք` աջակցել մեր երկրին, լինել Հայաստանի կողքին: Օգնել մեր հայրենիքին, որպեսզի գնա մեր ազգային ոգուն համահունչ եւ ճշմարիտ ճանապարհով, որպեսզի չվերանան մեր ընտանեկան արժեքները, մեր հավատքի եւ մեր Սուրբ Եկեղեցու հանդեպ սերը, պատկառանքն ու նվիրվածությունը: Ապրելով եւ աշխատելով Հայաստանից հեռու, բայց Հայաստանն իմ սրտում, ես իմ ուժերի եւ հնարավորությունների սահմաններում պետք է ամեն ինչ անեմ, որ ամրանան եւ առավել հուսալի դառնան մեր հայրենիքի սահմանները, որպեսզի ավելի հզորացնենք Հայաստանի տնտեսությունը, օգնենք լավ մասնագետներին եւ նվիրյալներին, որ երկիրը տանեն ճիշտ ճանապարհով:

Իսկ ներկայումս ես եւ իմ թիմը զբաղված ենք առավելապես մշակութային հարցերով, քանի որ առջեւում ունենք կյանքի կոչելու բազմաթիվ ծրագրեր:

Մենք հիմա ավելի շատ զբաղված ենք նրանով, որ աշխարհին ցույց տանք, թե ով ենք մենք եւ ինչ արժեհամակարգ ենք կրում, թե ովքեր են եղել մեր նախնիները եւ ինչ են արել իրենց ապրած ժամանակներում մեր` իրենց հետագա սերունդների եւ ամբողջ աշխարհի հայերի համար: Այսօր մենք ունենք պետություն եւ շնորհակալ ենք այն մարդկանց, ովքեր պահպանել են մեր երկիրը, ուր մինչեւ օրս մենք ապրում ենք: Այսօր մենք հնարավորություն ունենք աղոթելու մեր եկեղեցիներում եւ, փառք Աստծո, որ ուրիշ ազգերի նման չենք վերացել այս Երկիր մոլորակի վրայից:

Իր հիմնած «Հայ խաչակիրների ազատագրական շարժման» մասին խոսելիս Արթուր Ասատրյանն ասաց հետեւյալը.

- Մեր այդ նախաձեռնությունը շարժում է ազգայնական գաղափարախոսության, հայկականության, ընտանիքի, եկեղեցու պահպանության եւ հայապահպանությանը նվիրված: «Հայ խաչակիրների ազատագրական շարժումն» այսօր ունի շատ անդամներ, այսօր մենք ունենք միլիոնից ավելի մարդիկ` մեր գաղափարախոսության հետ քայլող, ովքեր համաձայն են մեզ հետ:

Խոսք գնաց նաեւ բարեգործության մասին:

- Ես 20 տարեկանից մինչ օրս զբաղվում եմ բարեգործությամբ եւ կզբաղվեմ մինչեւ իմ կյանքի վերջը,- ասաց պարոն Ասատրյանը:- Մանկատներ, ծերանոցներ, թանգարաններ` ահա՛ մեր բարեգործական ծրագրերի հիմնական ուղղությունները, ամեն օր մի բանով անպայման օգնում եւ նոր տուն եմ գնում:

«Խաչակիրները» շատ մեծ օգնություն են ցուցաբերել Արցախից տեղահանվածներին, մեծ բեռնատարներով ապրանքներ ենք արցախահայերի համար ուղարկել, գումարային մեծ օգնություն ենք ցուցաբերել: Մինչ օրս օգնում ենք:

Մարդ արարածը չի կարող գոյատեւել առանց հոգեւոր սննդի: Բարեգործությունն ինձ համար նույնպիսի նշանակություն ունի. այն իմ հոգեւոր սնունդն է, առանց որի ես ապրել չեմ կարող: Մենք ընտրել ենք ուղղություններ, ոլորտներ, որոնց հետ կապված` ծրագրեր ենք իրականացրել եւ, իհարկե, շարունակելու ենք մեր աշխատանքները: Այնուամենայնիվ, մենք չենք սահմանափակվելու միայն դրանով, մեր ուշադրության կենտրոնում կարող են հայտնվել տարաբնույթ խնդիրներ, ոլորտներ: Մեր իրականացրած աշխատանքները եղել են եւ լինելու են բազմաճյուղ:

Ես ինձ բախտավոր եմ համարում, որ Աստված ինձ բարեգործական ծրագրեր իրականացնելու հնարավորություն է ընձեռել: Ինքս ինձ է՛լ ավելի երջանիկ կհամարեմ` տեսնելով, որ մեր իրականացրած ծրագրերն օգնում են մարդկանց:

Տա Աստված, որ մեր աշխատանքները լինեն արդյունավետ ու երկարատեւ:

# Փարաջանովյան մեծ փառատոն Մոսկվայում` նվիրված արվեստագետի հոբելյանին



Կինոյի լեգենդ Սերգեյ Փարաջանովի 100-ամյակի առթիվ, որն ընդգրկված է ՅՈՒՆԵՍԿՕ-ի 2024 թվականի նշանակալից իրադարձությունների ցանկում, հոկտեմբերի 5-ից 30-ը Մոսկվայում անցկացվում է «Փարաջանով-ֆեստ» («Parajanov-fest») համառուսաստանյան մեծ փառատոնը: Այն կազմակերպել են Մոսկվայի իր անունը կրող թատրոնը եւ ՌԴ-ում Հայաստանի դեսպանության մշակույթի կենտրոնը` Ռուսաստանի մշակույթի նախարարության աջակցությամբ:

Ինչպես նշված է այս առթիվ ստեղծված հատուկ կայքում, փառատոնի նպատակն է մեր դժվարին ժամանակներում վեր հանել մեծ Վարպետի ստեղծագործությանը հատուկ հոգեւոր վեհ իդեալները, նրա փիլիսոփայության գեղեցկությունը եւ բարոյականության ու մարդասիրության բարձր աստիճանը: Փառատոնին կմասնակցեն մշակույթի եւ արվեստի ոլորտների հայտնի դեմքեր: Նախատեսված միջոցառումների շարքում Մոսկվայում կբացվի «Փարաջանովի ստվերները» յուրատեսակ ցուցահանդես, որտեղ կներկայացվեն ժամանակակից 100 նկարիչների գործեր` նվիրված Վարպետի 100-ամյակին: Փառատոնին նաեւ կներկայացվի տարբեր հեղինակների լուսանկարչական ցուցահանդես, կցուցադրվի հայ դիզայներ **Լիլիթ Մելիքյանի** «Փարաջանովի յոթը խորհրդանիշները» հեղինակային հավաքածուն:

Նախատեսվում է ցուցադրել Վարպետի մասին վավերագրական ֆիլմեր, «Նռան գույնը» ֆիլմի հետահայաց ցուցադրում, Փարաջանովի անվան թատրոնի «Սիրով վրեժխնդիր եմ լինելու աշխարհից» բեմադրությունը, կազմակերպել մուլտիմեդիա-միջոցառումներ, ստեղծագործական հանդիպումներ արվեստի նշանավոր վարպետների հետ, կլոր սեղաններ, մամուլի ասուլիսներ եւ այլն: Փառատոնը կեզրափակվի Ռուսաստանի բանակի կենտրոնական տանը տեղի ունենալիք փարաջանովյան մեծ գալա համերգով, որին կմասնակցեն երգչուհի **Մարիամ Մերաբովան**, պարահանդեսային պարերի աշխարհի չեմպիոններ **Արսեն Աղամալյանը** եւ **Օքսանա Վասիլեւան**, Սոֆի Դեւոյանի Պարի եւ հոգու թատրոնը, Հայաստանի ժողովրդական արտիստ **Բարսեղ Թումանյանը** եւ այլ կատարողներ:

Կազմակերպիչները հույս են հայտնում, որ նման մասշտաբային նախագիծն անտարակույս կդառնա Ռուսաստանի մշակութային կյանքի նշանակալից իրադարձություններից մեկը, ցույց տալով մեր բարդ ժամանակներում արվեստի ուժը, հոգեւոր գաղափարատիպերի եւ բարոյական արժեքների վերածննման ընդհանուր կամքը:

ԳԵՂԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ

# Երբ դժգոհում է գործադիրի ղեկավարը

**ԳԵՂԱՄ ՔՅՈՒՐՈՒՄՅԱՆ**

«Մենք որպես կառավարություն դանդաղ ենք շարժվում, երբ արագություն է պահանջվում. որպես երկիր հետ ենք մնում ժամանակակից աշխարհից»: Անմիջապես էլ նշեմ, որ խոսքը ՀՀ կառավարության մասին է, իսկ թե սույն կառույցի ո՞ր անդամ նախարարն է դրանք արտաբերել, մի փորձեք գտնել, նման մեկը գործադիրում չկա, քանզի մտքում արտաբերածն ու բարձրաձայնածը տարբեր բաներ են: ՀՀ կառավարության անդամներ են նաեւ նիստերին մասնակցող երկու փոխվարչապետերը, որոնց անմիջական պարտականություններից է խոսել եւ նշել գործադիր այս մարմնի անմիջական գործառության արդյունավետությունից, առաջիկա անելիքների հստակությունից: Ավա՜ղ, հայաստանյան հանրությունը նրանց կողմից նման գնահատականներ ընդհանրապես չի նկատում, լռելն ավելի նախընտրելի պահվածք է համարվում: Մնում է գործադիրի ղեկավարը, մեծարգո վարչապետը, որն էլ հենց գրառմանս սկզբում շարադրված խոսքերի հեղինակն է: Հավելեմ, որ ամիսներ առաջ երկրում գործերի թիվ 1 պատասխանատուն նաեւ հայտարարել էր. ՀՀ պետական ապարատը դեմ է բարեփոխումներին:

Թե ինչեր են գրված այդ բարեփոխումներ հռչակվող ծրագրերում, մեր մարդիկ այդպես էլ չեն նկատում եւ զգում: Նրանց ընդամենն ուզածն այն է, որ շքամուտքն ու բակը բարեկարգ լինեն, օգտվող տրանսպորտը ժամանակին գա, աշխատավայրում միջավայրը տրամադրող լինի, գործողությունները ի շահ մարդու ու հանրության կայացվեն, օրվա վերջին էլ գնումներ իրականացնելով ընտանիք վերադառնան, հաջորդ աշխատանքային օրվան տրամադրվեն: Ինչ-որ չի ստացվում, մեկ էլեկտրականությունն է անջատվում, մեկ ջուրը կտրվում, բնակտարածքի սպասարկման վարձավճարներ հավաքողն է ժամանում կամ 8-րդ հարկում բնակվող ընկերոջն է ավտոմեքենայի ձայնային ազդանշանով դիմում հերթական վարորդը, երբ թե՛ բջջային հեռախոս կա, թե՛ ժամանակակից արագ ընթացող վերելակն է աշխատում: Այս ամենին ավելանում է աշխատանք ունենալով հանդերձ չբավարարող ընտանեկան բյուջեն եւ միջին հայաստանաբնակն ունենում է այն իրավիճակը, որում գտնվում է՝ անբացատրելի անորոշություն ու մինչեւ անզորության սահմաններ ձգվող հիասթափության զգացում: Թե ե՞րբ եւ ո՞րտեղ է այն ավարտվելու, փորձենք պարզել «որպես կառավարություն դանդաղ ենք շարժվում» գնահատականի օգնությամբ, նաեւ՝ միջոցով:

Շարժում ասվածը հիմնականում առաջընթաց է ենթադրում, նաեւ՝վերելք, ուղղակի եւ անուղղակի առումներով: Ասենք, երբ ամիսներ առաջ ՀՀ բարձր տեխնոլոգիաների նախարարության պաշտոնյաները նշեցին դեպի տիեզերք հայկական արբանյակի արձակման մասին, անկախ մեր նախապատվություններից որոշակի զգացում ունեցանք: Այսուհանդերձ գտնվեցին նաեւ հանրային շրջանակներ, ուր բարձրացվեցին նաեւ զուգահեռաբար տնտեսության այլ ոլորտներում առաջնահերթությունների լուծման հարցեր: Ասենք՝ բնակարանային կառույցներում սեփական վերելակների արտադրություն ունենալու խնդիրը: Միայն այս ոլորտում հարյուրավոր միլիարդ դրամներ են արտերկրներ փոխանցվում, դրանցով աշխատատեղեր են պահպանվում ու նորերը բացվում, երբ համանման լուծումների կարիք ունենք ինքներս, մեր մարդկանց ու տնտեսության երկնիշ աճ ապահովելու առումներով: Ասել, թե խնդիրը բարդ է հայերիս համար, տեղին չի լինի, քանզի տասնամյակներ առաջ վերելակաշինական արտադրություն ունեցել ենք, երբեմնի հարմարավետ Սպիտակ քաղաքում: Ավերիչ 88-ին այն մասամբ փլուզվեց, ժամանակն էլ իրենն արեց եւ հայտնվեցինք իշխանափոխության փաստի առջեւ: Նորերը խոստացան վերականգնել վերելակաշինությունը, այն իրականացնել նորովի, անգամ դրանք արտահանել: Ավա՜ղ, ինչպես շատ առաջնահերթություններ, դրանք գործի չվերածվեցին:

Ակամայից հիշեցի մի հարցազրույց, որը Շվեյցարիայի նախագահը տվել էր ռուսական հեռուստաընկերություններից մեկի լրագրողին, ասելով. երբ դուք տուն վերադառնաք եւ ձեր աշխատավայր կամ բնակարան բարձրանաք, շատ հնարավոր է որ օգտվեք այն վերելակից, որը պատրաստվել է մեր մերձակա գյուղահամայնքում: Նկատենք, որ Սպիտակը մի քանի աստիճանով բարձր է գյուղական համայնք համարվելուց:

Եվ հարցը՝ ով կամ ինչն է խանգարում այսօրինակ հարցերում գործ սկսել Հայաստանի հանրապետությունում, ինչում է ինքնաբերաբար: Օրեր առաջ Երեւանի քաղաքապետարանում հանդիպմանն ասվեց, որ մինչեւ 2028 թվականը մայրաքաղաքի 2700 բարձրահարկերում վերելակներ են փոխվելու: Այս թվին ավելացնենք նորակառույցներում տեղադրվելիքը, կունենանք մի ահռելի ոլորտ, տասնյակ հազարավոր աշխատատեղեր, բյուջետային մուտքեր, այն, ինչ պահանջում է ՀՀ քաղաքացին: Իսկ առայժմ ստացվում է այն, որ հիմնավոր չեն նախարարների այն հավաստիացումները, ըստ որոնց արտերկրների իրենց գործընկերների հետ հանդիպումներում վերջիններս հետաքրքրություն են ցուցաբերել ՀՀ-ում ներդրումներ իրականացնելու առումով: Այնինչ փաստ է, որ ո-րերորդ տարին շարունակ ներդրումներում էական շարժ չի արձանագրվում: Անգամ բանկերում ավանդների աննախադեպ աճի պայմաններում, որը մոտենում է ՀՀ բյուջեի կրկնապատիկին: ՀՀ ունեւոր հատվածը, իսկ նրանք իշխանության շարժերում գտնվողներն են, գերադասում են միջոցները ներդնել անշարժ գույքի շուկայում, քան եկամուտ երաշխավորող տնտեսական ոլորտներում: Առեղծված է հիշեցնում, թե ինչո՞ւ են միլիոններով աշխատավարձ ու պարգեւավճարներ ստացողները գերադասում բանկերին հիպոտեկային վճարումներ իրականացնել, հավելյալ՝ դրանց սպասարկման ու պահպանման ծախսերը: Առայժմ թողնենք առեղծված տարբերակը...

Այնքանով որքանով խոսեցինք բնակարանաշինական ոլորտից, հետագա անելիքն էլ ուղղենք դեպի այն: Նշվում է առաջիկա տարիներից յուրաքանչյուրում միայն Երեւանում 40-50- հազարական բնակարան կառուցելուց: Ահռելի թիվ է, որը հարկավոր է կահավորել, ջեռուցել, նաեւ լուսավորել, որն իրականացվում է էլեկտրական զանազան լամպերի միջոցով: Դրանց շարքում վերջին տարիներին հայտնվել են այնպիսիք, որոնք էլեկտրական հոսանքի համեմատաբար պակաս ծախսի պայմաններում ցանկալի լուսավորություն են ապահովում: Արդյոք այստեղ հայաստանյան համապատասխան ներուժը ասելիք ու անելիք չունի՞, չէ՞ որ տասնամյակներ շարունակ էլեկտրալամպերի արտադրություն ենք ունեցել, դրանց հարյուր հազարավոր խմբաքանակներ արտահանել ենք թե՛ երբեմնի ԽՍՀՄ հանրապետություններ, թե՛ աշխարհի այլ երկրներ: Երեւանի Թբիլիսյան խճուղու հարեւանությամբ գտնվող երբեմնի հսկան հիմա էլ իր արտադրամասերով կանգուն է, մնում է այն ներսից շարժել, ուր ասելիք եւ անելիք ունեն ՀՀ ներդրումային ֆոնդը, ՀՀ բարձր տեխնոլոգիաների ու ՀՀ էկոնոմիկայի նախարարությունների մասնագետները, ինչու ոչ՝ նաեւ ՀՀ արտգործնախարարության տնտեսական կցորդները, էլի ու էլի պատասխանատու պաշտոնյաներն ու պետական հաստատությունները: Ստացվում է, որ իրոք շատ են ՀՀ-ի համար մասամբ տանելի միջավայր ստեղծելու կոչված այրերը, որոնք էլ խոչընդոտում են երկրի կայացումը, բարեբեր միջավայրի ստեղծումը:

Ակամայից հիշեցի ԱՄՆ-ի ու մի քանի այլ երկրների օրինակը: Երկիր մոլորակի թիվ 1 տնտեսությունն ունեցող 340 մլն բնակչությամբ ԱՄՆ-ում նախարարությունները ընդամենը 15-ն են: Տասնամյակներ շարունակ, թող որ սիրողական մակարդակով, հետեւել եմ այդ երկրում ծավալվող իրադարձություններին եւ երբեւէ չեմ նկատել, որ այդ 15 պաշտոնյաները, ովքեր ի դեպ անգլերենով դեպարտամենտների քարտուղարներ են անվանվում, մեկ սենյակում կամ դահլիճում հավաքվեն ու որեւէ հարց կամ խնդիր քննարկեն: Հավաքներ ունենում են Իսրայելի կառավարության անդամները, մեկ սեղանի շուրջ. եթե վարչապետին չես ճանաչում, չես էլ պատկերացնի, թե նրանցից ո՛վ է նիստը վարում: Նման մի բան նկատվեց օրերս Ֆրանսիայի կառավարության առաջին հավաքին:

Ստացվում է՝ ինչպես միշտ. մերն ուրիշ է: Ուրիշ է նաեւ մեկ բնակչի հաշվով համախառն ներքին տարեկան արդյունքը. մերը՝ 8.000 դոլար, ԱՄՆ՝ 80.000 դոլար, պատերազմող Իսրայելինը՝ 50.000 դոլար, Ֆրանսիայինը՝ 55.000 դոլար:

Ապրենք հույսի նշույլով:

**01.10.2024թ.**

## Իմաստաբանական բառարան

### *Ականջախեցի*

Լսելուց բացի ականջն ունի նաև բազմաթիվ այլ գործառույթներ: Խոսքս լսողության օրգանի միայն տեսանելի հատվածի, այսինքն՝ ականջախեցու մասին է, որը հաճախ «ծառայում» է նաեւ այլ նպատակների:

Հայոց պատմության այն փառավոր շրջանում, երբ գրաբարը դեռ չէր խորթացել, եւ մենք կարողանում էինք տարբերակել «Հայոց» եւ «Հայաստան» բառերի խորքային իմաստները, ականջով հասկացնելու հնարքը չաշխատելու դեպքում ծառաներին ծեծի միջոցով էինք ընկալել տալիս: Մեր նախնիների հին ասույթը դրա մասին է. «Ծառա որ ընդ ունկն ոչ լսե՝ ընդ մկանունս լսել տան նմա» («Ծառան որ ականջով չի լսում՝ մեջքով լսել կտան նրան». այսինքն՝ ծեծելով կստիպեն ծառային կատարել ղազագրով ստանձնած իր պարտավորությունները):

Հայոց պատմության որոշակի ժամանակահատվածում էլ մեր ազգային շահերն ու «կարմիր գծերը» չմոռանալու համար ականջներից օղ էինք կախում (ականջին օղ էինք անում): Այդ սովորույթի բուն իմաստը մոռանալու պատճառով, այսօր միայն որոշ չկողմնորոշված տղաներ, իբրեւ զարդ, ականջից գինդ են կախում (առայժմ միայն մեկ ականջից):

Փոքր տարիքում, միգուցե հոգուս հետ խաղալու համար, մեծահասակներն ականջների նշանակության մասին խոսելիս, ինձ համոզում էին, որ եթե ականջներ չլինեին, գլխարկը կիջներ աչքերի վրա ու մենք ոչինչ չէինք տեսնի: Այսօր սահմանամերձ գյուղերում անվտանգության զգացումը հաղթահարելու համար մեծ ծախսերի հետ կապված ծառ տնկելու ավանդույթի փոխարեն կարելի է լայն գլխարկ դնել:

Ժամանակին «ականջ կտրել» արտահայտությունն այլաբանորեն միայն «ամուսնանալ» իմաստով էր օգտագործվում: Այսօր ոմանց շուրթերից հնչող նույն արտահայտությունը բառացի է ընկալվում: Հիշենք ՀՀ Ազգային ժողովի մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նիստում ՔՊ-ական պատգամավոր **Արթուր Հովհաննիսյանի՝** «լեզու եւ ականջ կտրելու» քրեական հանցակազմ չպարունակող սպառնալիքը:

Ականջներն ունեն նաեւ մի զարմանալի հատկանիշ. որքան էլ, որ փորձես ինքնությունդ թաքցնես, անցածդ ճանապարհը կոծկես, միեւնույն է՝ նախկիններից ինչ-որ մեկի ականջները երեւալու են քո ետեւից:

**ԳՐԻԳՈՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ**

# Եղել ենք, կանք եւ կլինենք

Ուսանողներին հայրենասիրական ոգով դաստիարակելու գործում հսկայական աշխատանքներ են կատարվում Պլեխանովի անվան ռուսական տնտեսական համալսարանի երեւանյան մասնաճյուղում: Վերջերս տեղի է ունեցավ Արցախյան 44-օրյա պատերազմի նահատակների տարելիցին նվիրված հիշատակի միջոցառում: Միջոցառման մասնակիցները մեկ րոպե լռությամբ հարգեցին զոհված զինվորների հիշատակը, որոնց թվում էին նաեւ համալսարանի ուսանողները. **ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՍԵՐԳԵՅ, ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԷԴԳԱՐ, ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ, ԵՐԿԱՆՅԱՆ ՍԵՆՈ, ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ԲԵՆԻԱՄԻՆ:**

Մասնաճյուղի տնօրեն, տ.գ.թ. **Թ. Վարդանյանը** հանդես եկավ ելույթով, որում հարգանքի տուրք մատուցեց հերոսներին եւ ընդգծեց պատմական հիշողության պահպանման կարեւորությունը, հայ ժողովրդի ոգու եւ միասնության ամրապնդման գործում:Միջոցառումն ավարտվեց խորհրդանշական ներկայացմամբ, որը եւս մեկ անգամ ցույց տվեց հայ ժողովրդի տոկունությունն ու արիությունը:

Հարկ է նշել նաեւ, որ օրերս Սոչի քաղաքում միջազգային օլիմպիադայում համալսարանի ուսանողներից երեքը բարձր պահեցին մեր երկրի պատիվը եւ 36 երկրների 600 մասնակիցների մեջ նվաճեցին 2-րդ հեղինակավոր մրցանակը:

Պլեխանովի անվան ռուսական տնտեսական համալսարանի երեւանյան մասնաճյուղի ուսանողներն արդեն 3-րդ տարին է, ինչ մասնակցում են Ֆինանսական անվտանգության միջազգային օլիմպիադային եւ պատվավոր տեղ զբաղեցնում օլիմպիադաներում: Հաջողություն ցանկանանք նրանց:

**ՍՏԵՓԱՆ ՊԱՊԻԿՅԱՆ**



# Զարմանք բաներ

⇨1 Ինչո՞ւ ցանկանալ մի բան, որի ելքն ի սկզբանե հայտնի է: Եթե իրոք ուզում եք վարչապետի հրաժարականը, այլ ժամավաճառությամբ չեք զբաղվում, սպասելով ինչ-որ ձեզ հայտնի ծրագրի իրականացմանը, ապա ճիշտ կլինի, որ պահանջեք այս կառավարության ձեւավորած Ազգային ժողովի լուծարումը, կարող եք դա պահանջել փողոցային հանրահավաքների ժամանակ, խորհրդարանական գործիքներով եւ այլն, դա՛ է ճիշտ ճանապարհը, քանի որ իսկի խորհրդարանում մեկ երրորդ պատգամավոր չունեք, կես պատգամավոր պակասում է , որ վարչապետի թեկնածու առաջադրեք: Եթե ինչ-որ մեկին թվում է, որ հրաժարական եւ իշխանափոխություն պարտադրվելու է ժողովրդի ճնշմամբ, եւ ոչ ընտրություններով, ապա արդեն վեց տարի տեսնում ենք, որ ընդդիմության կողմնակիցները չեն ավելանում ու չեն ավելանա, կուզեք «ստոյկա» տվեք, հրեշտակներ բերեք հրապարակ կամ շուրջօրյա լրատվություն ապահովեք: Ու ինչ էլ կատարվի (օրինակը՝ Արցախի հանձնումն ու հայաթափումը փաստորեն մարդկանց չբերեցին դեպի ընդդիմություն), մարդիկ ընդդիմության կողմը չեն թեքվելու՝ բոլորի համար շատ հանրահայտ պատճառներով, անգամ եթե ոչ ոք չմնա ներկա իշխանության կողմնակից: Անգամ բոլորին եւ ամեն ինչին ընդդիմադիր լինելով: Ավելի շուտ՝ կհեռանան երկրից: Որքան կուզեք էմոցիոնալ ելույթներ ունեցեք, դա ոչինչ չի փոխում, բայց եւ եթե դա իմանալով՝ շարունակում եք այսպես, ուրեմն՝ անհնար է չիմանաք, որ ձեր գործելակերպով նպաստում եք ներկա իշխանության դիրքերի պահպանմանը: Կամ էլ վայր դրեք մանդատները, քանի որ իշխանությունը հենց դրանից՝ առանց ընդդիմություն խորհրդարան ունենալուց եւ ժողովրդավարի կերպարից տիտղոսազուրկ լինելուց է վախենում, սա մեկ, երկրորդ, կողք քաշվելով՝ նպաստեք իրական, արտահամակարգային ընդդիմության առաջացմանը, քանի ուշ չէ, դա երկրին է պետք: Նորից ու նորից, ցավոք ու շատերիդ համար անընդունելի այս տեսակետը՝ այս անգամ Աջապահյանը որպես առիթ: Կեղծ նոր ուժեր մի՛ ստեղծեք՝ իբր նոր ուժ է, հիմնադիր համագումար է անում, կենտրոնում նստած են հայտնի «զոռ» նայողները:

Իսկ թե ինչ է տեղի ունեցել վարչապետ Փաշինյանի մոսկովյան այցի ժամանակ, երբ նա մասնակցել է ԱՊՀ պետությունների ղեկավարների խորհրդի հերթական նիստին, ինչո՞ւ Հայաստանն իր ստորագրությունը չի դրել ԱՊՀ երկրների փոխարտգործնախարարների հանդիպման արդյունքում ընդունված երկու հայտարարությունների տակ՝ սա միայն հրապարակային տեղեկատվության վերլուծությամբ անել հնարավոր չէ, քանի որ կուլիսներում տեղի են ունենում բաներ, որոնցից մենք անտեղյակ ենք, մեզ լայն բացվածքով չեն ասում՝ ո՞ր կողմից ի՞նչ է պարտադրվում Հայաստանին, ի՞նչ է դեմ տրվում: Հայաստանի չստորագրած հայտարարություններից մեկը հստակորեն վերաբերում էր Եվրասիայում անվտանգության ապահովման սկզբունքներին եւ միջազգային հարաբերություններում միակողմանի միջոցների կիրառման անթույլատրելիությանը (իմա՝ Ռուսաստանի դեմ պատժամիջոցներին):

Փաշինյանը հանդիպման ժամանակ հնչեցրած իր ելույթում հասկացնում էր, որ Սյունիքի միջանցքի վերահսկողությունը երրորդ երկրի հանձնվել չի կարող, եւ ընդհանրապես՝ ոչ մի փաստաթղթով նախատեսված չէ Նախիջեւանն Ադրբեջանին կապող ճանապարհ, այլ միայն տարածաշրջանի հաղորդուղիների ապաշրջափակման համատեքստ է առկա: Ըստ որոշ լուրերի՝ հավաքի շրջանակներում նախատեսված **Պուտին-Փաշինյան-Ալիեւ** եռակողմ հանդիպումը հենց հայկական կողմի առարկությամբ տեղի չի ունեցել: Միանշանակ պնդելը դժվար է, թե չստորագրելը Ռուսաստանին դուրս մղելու արեւմտյան պարտադրանքի արդյունք է՝ դեմարշ Ռուսաստանի հանդեպ, ինչպես մեր ընդդիմադիրներն ոմանք են նշում, կամ երկրի ինքնուրույնությունը պնդելու քայլ՝ երրորդ կողմի հարկադրանքին չենթարկվելու առումով, ինչպես իշխանականներն են ոգեւորված՝ իրենց «բալանսավորված» քաղաքականությունը վկայակոչելով:

Էլի ենք ասում, մենք շատ բան չգիտենք ներկուլիսային գործընթացներից, որի արտացոլում էր երեւի **Սերգեյ Լավրովի** անտակտ դիտարկումը կենդանու կերպարի մեջ մտած երեխաների մասին, չգիտենք՝ արդյոք կայացե՞լ է եռակողմ գաղտնի հանդիպում, ինչպես տելեգրամյան ալիքներից մեր մամուլում է արտահոսք եղել, եւ այդ բոլորով հանդերձ՝ Պուտինը Փաշինյանին հրավիրել է հոկտեմբերի երրորդ տասնօրյակում տեղի ունենալիք ԲՌԻԿՍ-ի կազանյան գագաթնաժողովին: Համենայնդեպս՝ ռուսական կողմը բազմիցս ապացուցել է, որ տնտեսական շահը քաղաքական շահին չի ստորադասում, իսկ Հայաստանն այս պահին նրա լավ տնտեսական գործընկերն է՝ առեւտրաշրջանառության շատ բարձր ցուցանիշներով: Իսկ թե Ադրբեջանն ու Հայաստանը որքանով են պատրաստ խաղաղության թուղթ կնքելու, ու հնարավո՞ր է դա, թե՞ ոչ (Փաշինյանը հավաստիացնում էր, որ հնարավոր է)՝ աշխարհաքաղաքական ծավալուն խաղերի մեջ մտած Պուտինի համար երկրորդական է, նա իր շահերն առանձին-առանձին հանդիպելով ու տարբեր ճնշման գործիքներով էլ կարող է առաջ տանել, ասա՝մենք մե՛րը չգիտենք:

Իհարկե՝ Փաշինյանի այցը Մոսկվա պետք է տեղի ունենար, քանի որ Հայաստանն իրավունք չունի այս խառնակ ժամանակներում արտահայտվելու, գործելու ոչ մի հրապարակային հնարավորությունից հրաժարվել, լինի դա եվրասիական հարթակ, թե ՄԱԿ-ի ամբիոն, հարցն այն է, թե ինչպես են օգտագործվում այդ հնարավորությունները, եւ օգտագործողն ունա՞կ է դրանք լիարժեք օգտագործել: Անկախ նրանից՝ դա գնահատվում է որպես վերադարձ Ռուսաստանի գիրկը, թե՞ Արեւմուտքի հանձնարարությունների կատարում, թե՞ ԱՄՆ-ի դեմ արված քայլ, մենք մեր շահն ունենք: Եւ էլի մի պարտավորություն՝ վերադառնալուց հետո լիարժեք բացատրություններ տալ հայ հանրությանը, որը սնվում է ենթադրություններով:

*Հեղինակի յութուբյան հրապարակումները դիտեք այս հասցեով.*

*https://www.youtube.com/channel/UC7a2vlmCM-LVmBF10D60LdxQ*

# Գիտության շաբաթը Ազատության Հրապարակում



Երեւանի Ազատության հրապարակում 2024թ. հոկտեմբերի 1-6-ն անցկացվեց համազգային Գիտության շաբաթ միջոցառումը: Այն միավորեց ՀՀ գիտական, կրթական կառույցներին եւ գիտաշխատողների: Մեր երկրում առաջին անգամ անցկացված համազգային Գիտության շաբաթվա նպատակն էր մոտեցնել գիտությունը հասարակությանը:

«Գիտությունն ամենուրեք է» խորագրով միջոցառումների շրջանակում երիտասարդները, դպրոցականները եւ գիտությամբ հետաքրքրվողները գիտնականների հետ իրականացրին գիտափորձեր, քննարկումներ, լսեցին դասախոսություններ:

«Մասնագիտական կողմնորոշում. ապագա գիտնականները» խորագրով միջոցառման մասնակիցները ծանոթացան գիտության աշխարհի գաղտնիքներին:

«Գիտական ֆանտաստիկա. երեւակայի՜ր» թեմայով միջոցառման ժամանակ անցկացվեցին հետաքրքրական մրցույթներ:

Գիտության շաբաթը կազմակերպել էին «Գիտուժ» նախաձեռնությունը եւ Գիտությունների ազգային ակադեմիան՝ Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության աջակցությամբ:

**ՍՏԵՓԱՆ ՊԱՊԻԿՅԱՆ**

# Կառուցվում է Հայաստան-Իրան էլեկտրահաղորդման գիծը



Հայաստան-Իրան էլեկտրահաղորդման 400 կՎ լարման երրորդ գիծը կունենա ժամում 1200 ՄՎտ հզորություն: Այժմ այն գտնվում է ավարտական փուլում: 85 տոկոսն արդեն կառուցվել է: Կլինի 280 կմ գիծ Հրազդանից դեպի Իրանի սահման եւ եւս 400 կՎ ենթակայան Սյունիքի մարզում: Եվ եւս մեկ գիծ կլինի դեպի Վրաստանի սահման: Նախագծի ավարտից հետո հնարավորություն կլինի միացնել չորս երկրները՝ Իրանը, Հայաստանը, Վրաստանը եւ Ռուսաստանը նույն համակարգում: Անհրաժեշտ է նշել, որ Հայաստան-Իրան էլեկտրահաղորդման երրորդ գիծը շահավետ կլինի ամբողջ ԵԱՏՄ-ի տարածքի համար:

Վերջին երկու ամսվա ընթացքում Հայաստանից՝ Իրան հատվածում տեղադրվել է մոտ 40 հենասյուն, կատարվել են բետոնացման աշխատանքները, որոնք իրականացվում են բարդ ռելիեֆային պայմաններում: Ջեռք է բերվել պայմանավորվածություն ամրապնդելու համագործակցությունը իրանական կողմի հետ՝ աշխատանքներն ավելի օպերատիվ կազմակերպելու ուղղությամբ:

220/110/6կՎ «Ագարակ-2» ենթակայանը կարեւոր նշանակություն ունի էլեկտրաէներգիայի հուսալիության բարձրացման համար:«Շինուհայր» ենթակայանից «Մեղրի-1» եւ «Մեղրի-2» էլեկտրահաղորդման գծերը միանում են «Ագարակ» ենթակայանին, որտեղից «Արասբարան-1» եւ «Արասբարան-2» էլեկտրահաղորդման գծերով էլեկտրաէներգիան մատակարարվում է Իրան: Մեկ ժամում ենթակայանը կարող է մինչեւ 300 ՄՎտ էլեկտրաէներգիա արտահանել Իրան: «Նորավան» ենթակայանի շահագործումից հետո հնարավոր կլինի այն ավելացնել եւս 200 ՄՎտ հզորությամբ եւ ժամում 500 ՄՎտ հզորությամբ էլեկտրաէներգիա արտահանել Իրան, իսկ Հայաստան-Իրան 3-րդ էլեկտրահաղորդման գծի կառուցման եւ «Հրազդան» հանգույցի «Դդմաշեն» կայանի շահագործման պարագայում՝ արտահանման հնարավորությունը կավելանա ժամում 500 ՄՎտ-ով, կազմելով 1000 ՄՎտ:

Շինուհայր ենթակայանը շահագործման է հանձնվել 1961թ: Շահագործումից հետո այնտեղ կատարվել են մասնակի վերակառուցման աշխատանքներ: Ենթակայանի հիմնանորոգման աշխատանքների մեկնարկը տրվել է 2018-2019թթ.: Ներկայումս աշխատանքները գտնվում են ավարտական փուլում:Ենթակայանի դրվածքային հզորությունը 251 ՄՎտ է: Տեղադրված են մեկ 125 եւ երկու 63 ՄՎտ հզորության նոր ավտոտրանսֆորմատորներ:Այն համակարգային նշանակության հանգուցային ենթակայան է:

**ՍՏԵՓԱՆ ՊԱՊԻԿՅԱՆ**

«ԱԶԳ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԼԳ տարի
Հրատարակիչ
**«ՎԱՀԱՆ ԹԵՔԵՅԱՆ» սոցիալ-մշակութային հիմնադրամ**
Երեւան, Սայաթ-Նովա 21Ա, Տարածք 48
**e-mail:** info@azg.am
azgdaily@gmail.com
**www.azg.am**
*Գլխաւոր խմբագիր*
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ
*Հաշվապահութիւն (գովազդ)*
հեռ. **010 582960**
*Համակարգչային շարուածքը՝*
«Ազգ» թերթի
"AZG" Weekly
Editor-in-chief H.AVEDIKIAN
Phone: 374 010 582960

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Վահան Թեքեյան» սոցիալ-մշակութային հիմնադրամ», Երեւան, Սայաթ-Նովա 21Ա, Տարածք 48, Երեւան 0001: Պետական գրանցման վկայականի համարը՝ 286.110.1041780, տրուած՝ 25.10.2018 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Ստորագրուած է տպագրութեան 10.10.2024, գինը՝ 200 դրամ, տպագրւում է «Գինդ» տպարան ՍՊԸ, ք. Երեւան, Բագրատունյաց 70ա: